Սոցիալական աշխատանքի մասնագիտական չափորոշիչներ (ստանդարտներ)

Սոցիալական աշխատանքի մասնագիտական չափորոշիչները մշակվել են «Ներդաշնակ հասարակություն» սոցիալական աշխատողների հայկական ասոցիացիայի նախաձեռնությամբ՝ Հայաստանում ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի աջակցությամբ:

Երևան, 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հիմնական հասկացություններ……4

Որպես նախաբան. չափորոշիչների ներդրման անհրաժեշտությունը……6

Մաս 1
«Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչը……9

Մաս 2
Սոցիալական աշխատանքի պրակտիկայի չափորոշիչները……..……22

Բաժին 1. Սոցիալական աշխատողի պրակտիկ գործունեության չափորոշիչները……22

Բաժին 2. Սոցիալական աշխատանքի ծառայությունների/կազմակերպությունների ղեկավարներին/գործատուներին ներկայացվող չափորոշիչները……26

Բաժին 3. Փաստաթղթավորման չափորոշիչները……..29

Մաս 3
Սոցիալական աշխատանքի սուպերվիզիայի չափորոշիչները……...……...31

Մաս 4
Սոցիալական աշխատանքի մասնագիտական էթիկական չափորոշիչները……36

Մաս 5
Զանգվածային լրատվական միջոցներում սոցիալական հիմնախնդիրների լուսաբանման չափորոշիչները……..……43

Մաս 6
Չափորոշիչների խախտման դեպքում կիրառվող ընթացակարգերը/սանկցիաները……48

Մաս 7
Հավելվածներ……..……50

Հավելված 1. «Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի դասընթացների ընդհանուր մասնագիտական բաղադրիչը……...……....50

Հավելված 2. Քաղվածք «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքից……..51

Օգտագործված գրականության ցանկ……..57

Հեղինակային խումբ

Անտոնյան Միրա, ս.գ.թ., դոց., ԵՊՀ, Սոց. աշխ. և սոց. տեխն. ամբիոնի դասախոս, Ասոցիացիայի նախագահ

Գեղամյան Նունե, տ.գ.թ., դոց., ԵՊՀ, Սոց. աշխ. և սոց. տեխն. ամբիոնի դասախոս, Ասոցիացիայի խորհրդի անդամ

Խաչատրյան Արտակ, ս.գ.թ., դոց., ԵՊՀ, Սոց. աշխ. և սոց. տեխն. ամբիոնի վարիչ, Ասոցիացիայի խորհրդի անդամ

Մարկոսյան Ռուբեն, տ.գ.թ., ԵՊՀ պրոռեկտոր, Ասոցիացիայի խորհրդի անդամ

Մելքոնյան Նվարդ, ս.գ.թ., դոց., ԵՊՀ, Սոց. աշխ. և սոց. տեխն. ամբիոնի դասախոս, Ասոցիացիայի խորհրդի անդամ

Մինասյան Աստղիկ, ԱՍՀՆ Սոց. աջակցության վարչության պետ, Ասոցիացիայի խորհրդի անդամ

Մխիթարյան Արմինե, Աշխ. և սոց. հետազոտությունների ազգային ինստիտուտի սոց. աջակցության բաժնի պետ, Ասոցիացիայի խորհրդի անդամ

Ոսկանյան Աննա, ԵՊՀ, Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս

Յարմալոյան Մարինե, Սոց. աշխ. մագիստրոս, ԵՊՀ, Սոց. աշխ. և սոց. տեխն. ամբիոնի դասախոս, Ասոցիացիայի խորհրդի անդամ

Պետրոսյան Մանանե, Սոց. աշխ. մագիստրոս, Ասոցիացիայի խորհրդի անդամ

Ջուհարյան Սյուզաննա, Սոց. աշխ. մագիստրոս, ԵՊՀ, Սոց. աշխ. և սոց. տեխն. ամբիոնի դասախոս, Ասոցիացիայի խորհրդի անդամ

Սահակյան Անահիտ, հ.գ.թ., դոց., ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի փոխդեկան, Սոց. աշխ. և սոց. տեխն. ամբիոնի դասախոս, Ասոցիացիայի խորհրդի անդամ

Վարդանյան Եվգինե, ԵՊՀ, Սոց. աշխ. մագիստրոս, Սոց. աշխ. և սոց. տեխն. ամբիոնի դասախոս, Ասոցիացիայի խորհրդի անդամ

Հեղինակները շնորհակալություն են հայտնում ասոցիացիայի անդամներ՝ սոցիալական աշխատանքի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողներ Մարիամ Մազմանյանին և Տաթևիկ Կարապետյանին, ինչպես նաև սոցիալական աշխատանքի մագիստրոս Ելենա Հարությունյանին՝ տեխնիկական աջակցության համար:

Շնորհակալություն բոլոր այն մասնագետներին, ովքեր իրենց դիտարկումներով և նկատառումներով օգնեցին ավարտին հասցնել չափորոշիչների մշակումը:

Սոցիալական աշխատողների հայկական ասոցիացիան հատուկ շնորհակալություն է հայտնում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամին՝ ցուցաբերած աջակցության համար:

Հիմնական հասկացություններ

Սոցիալական աշխատանք. Սոցիալական աշխատանքը մասնագիտական գործունեություն է և ակադեմիական գիտակարգ (դիսցիպլին), որն օգնում է անհատներին, խմբերին կամ համայնքներին լուծել այն սոցիալական հիմնախնդիրները, որոնք խոչընդոտում են սոցիալական արդարության, սոցիալական ինտեգրման, սոցիալական մասնակցության և սոցիալական համերաշխության սկզբունքների իրականացմանը: Այդ նպատակով կիրառում են գիտակարգում ընդունված տարբեր մեթոդներ և մոտեցումներ՝ օգտագործելով առկա ռեսուրսներն ու հնարավորությունները, ակտիվացնելով պոտենցիալ, պասիվ ռեսուրսները կամ ստեղծելով նորերը:

Սոցիալական աշխատանք մասնագիտությունը նպաստում է սոցիալական փոփոխություններին, մարդկային փոխհարաբերություններում առկա հիմնախնդիրների հաղթահարմանը և մարդկանց ներուժի ու կարողությունների զարգացմանը: Նպատակը՝ անհատների, համայնքների, հասարակության բարեկեցությունն է: Տեսական մոտեցումները հիմք ընդունելով՝ սոցիալական աշխատանքը միջամտում է այն դեպքերում, երբ մարդիկ դժվարություններ են ունենում իրենց միջավայրի հետ հարաբերություններում: *Մարդու իրավունքների և սոցիալական արդարության սկզբունքները համարվում են սոցիալական աշխատանքի հիմնասյուները:*

Սոցիալական աշխատանքը բավականին դիպուկ անվանում է մի մասնագիտության համար, որում պրոֆեսիոնալ կերպով կիրառվում են օգնող տեխնիկաներ սոցիալական հիմնախնդիրներին հասցեականորեն արձագանքելու համար: Այս մասնագիտությունը կոչված է ապահովելու սոցիալական արդարությունը հասարակությունում, բարձրացնելու մարդկանց կյանքի որակը և զարգացնելու դժվար իրավիճակում հայտնված անհատի, ընտանիքի, խմբի կամ համայնքի ներուժը:

Սոցիալական աշխատող. Սոցիալական աշխատողը մասնագետ է, ով ունի սոցիալական աշխատանքի բակալավրի կամ մագիստրոսի որակավորում՝ շնորհված ԲՈՒՀ-ի կամ համապատասխան լիազորված մարմնի (արտոնագրման/լիցենզավորման մարմին/կառույց) կողմից:

Պրոֆեսիոնալ սոցիալական աշխատողներ են համարվում սոցիալական աշխատանքի մասնագիտական կրթություն ստացած անձինք, որոնք առաջնորդվում են սոցիալական արդարության ուղղությամբ աշխատելու ու անհավասար/խտրականություն պարունակող սոցիալական համակարգերը փոփոխելու ավանդույթով: Սոցիալական աշխատանքի պրոֆեսիոնալը կարող է զբաղվել մասնագիտական գործունեության տարբեր տեսակներով՝ դեպքի կառավարում, կլինիկական/անհատական սոցիալական աշխատանք, խմբային սոցիալական աշխատանք, սոցիալական ծառայությունների կառավարում, համայնքային կազմակերպում, սոցիալական աշխատանքի դասավանդում ու գիտահետազոտական աշխատանք և այլն:

Շահառու կամ շահառուի համակարգ. Շահառուն անհատն է, խումբը, ընտանիքը կամ համայնքը, ով հանդիսանում է սոցիալական աշխատողի կողմից մատուցվող ծառայությունների ստացողը, այլ կերպ ասած՝ ում նպատակները, կարիքները և ուժեղ

կողմերը հանդիսանում են սոցիալական ծառայությունների տրամադրման գլխավոր կիզակետը: Շահառուի համակարգը ներառում է շահառուին և նրան աջակցող ցանցի անդամներին:

Սոցիալական աշխատանքում այցելուն /կլիենտը/ հավաքական հասկացություն է, որը կարելի է սահմանել որպես սոցիալական աշխատողի ուղղակի կամ անուղղակի ծառայություններից օգտվող անհատ կամ այլ միավոր՝ զույգ, ընտանիք, խումբ, համայնք:

Չնայած այն հանգամանքին, որ այցելուները, նրանց հիմնախնդիրները, տրամադրվող ծառայությունները կարող են շատ տարբեր լինել, անկյունաքարային մասնագիտական սկզբունքները և չափորոշիչները մնում են նույնը:

Ադվոկացիա (շահապաշտպանություն*).* Ադվոկացիան (շահապաշտպանությունը) անհատների կամ խմբերի իրավունքների պաշտպանությանն ուղղված գործողությունների ամբողջությունն է:

«Շահապաշտպանություն» հասկացությունը սոցիալական հիմնախնդիրների, ճգնաժամերի համատեքստում ձեռք է բերել ուրույն իմաստ և մեկնաբանվում է որպես առանձնահատուկ փուլային գործընթաց՝ ուղղված ազդեցիկ, իշխանություն ունեցող կամ որոշումներ կայացնող մարդկանց, խմբերի կամ կազմակերպությունների կողմից կիրառվող քաղաքականության, օրենսդրության, հիմնախնդիրների լուծման պրակտիկաների, այլ կերպ ասած նրանց դիրքորոշումների, գործողությունների և քաղաքականության փոփոխությանն ու բարելավմանը:

Համագործակցություն. Համագործակցությունը գործընթաց է, որի ընթացքում անհատները և կազմակերպությունները համատեղ աշխատում են ընդհանուր նպատակին հասնելու ուղղությամբ:

Մասնագիտական սուպերվիզիա. Մասնագիտական սուպերվիզիան սահմանվում է որպես սոցիալական աշխատող-սուպերվիզիայի ծառայություններից օգտվող մասնագետի և խորհրդատու-սուպերվիզորի միջև փոխհարաբերություն, որի ընթացքում տեղի է ունենում մասնագիտական գիտելիքների, փորձի և էթիկայի վրա հիմնված պրակտիկայի զարգացմանն ուղղված պատասխանատվության և հաշվետվողականության փոխանակում:

Վարչական սուպերվիզիան վարչական մեթոդների կիրառման գործընթաց է, որը հնարավորություն է տալիս սոցիալական աշխատողին արդյունավետ կատարել աշխատանքը և մատուցել որակյալ ծառայություններ: Վարչական սուպերվիզիան ուղղված է գործակալության քաղաքականությանը կամ կազմակերպության պահանջներին, ինչպես նաև կենտրոնանում է սուպերվիզիայի ծառայություններից օգտվող մասնագետի կողմից աշխատանքային գործառույթների իրականացման և աշխատանքային պայմանագրին վերջինիս գործողությունների համապատասխանության գնահատման վրա:

Կրթական սուպերվիզիան կենտրոնանում է մասնագիտական խնդիրների վրա և վերաբերում է յուրահատուկ դեպքերին: Այն օգնում է սուպերվիներին ավելի լավ հասկանալ սոցիալական աշխատանքի ընթացքը, ինչպես նաև կատարելագործել սեփական գիտելիքներն ու հմտությունները:

Աջակցային սուպերվիզիան նվազեցնում է աշխատանքային սթրեսը, որը ծագում է սուպերվիների մեծ ծանրաբեռնվածության դեպքում: Այն շեշտադրում է աշխատանքային հաջողությունները և նպաստում է աշխատանքային արդյունավետության բարձրացմանը: Աջակցային սուպերվիզիան իրականացվում է պաշտպանության և վստահության մթնոլորտում, որտեղ սուպերվիները կարող են լիարժեք մասնագիտական նույնականացում զգալ:

Որպես նախաբան. չափորոշիչների ներդրման անհրաժեշտությունը

Վերջին տարիները ՀՀ-ում նշանավորվեցին սոցիալական ոլորտի արմատական բարեփոխումներով (ինտեգրված սոցիալական ծառայությունների ներդրում, կյանքի դժվարին պայմաններում հայտնված երեխաների խնամքի ու պաշտպանության համակարգի վերակազմակերպում, անցումը զբաղվածության ակտիվ քաղաքականության և այլն): Այս բարեփոխումները դեռևս ընթացքի մեջ են և չնայած դրան արդեն իսկ տրամաբանորեն հանգեցրել են սոցիալական ոլորտում այնպիսի միջավայրի ձևավորմանը, որտեղ գիտակցված և հիմնավորված է սոցիալական աշխատանքի ինստիտուտի զարգացման անհրաժեշտությունը: Մասնագիտության զարգացումը և լայնամասշտաբ ներդնումը սոցիալական պաշտպանության համակարգում իր հերթին ենթադրում է մասնագետների պատրաստման, մասնագիտական պրակտիկ գործունեության, մասնագետների վարքակարգապահական հստակ չափորոշիչների կիրառում:

Սոցիալական աշխատողների հայկական ասոցիացիան ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի աջակցությամբ նախաձեռնեց սոցիալական աշխատանքի մասնագիտական չափորոշիչների մշակումը՝ ընդառաջ գնալով իրականացվող բարեփոխումներին և խթանելու սոցիալական աշխատանքի ինստիտուտի ներդրման իրավաչափությունն ու համապատասխանությունը մասնագիտության միջազգային չափորոշիչներին: Չափորոշիչների ներդնումը և կիրառումը թույլ կտա լուծել ոչ միայն ներկա պրակտիկ գործունեության խնդիրները, այլև նպաստել մարդկանց մատուցվող սոցիալական ծառայությունների որակի շարունակական բարելավմանն ու կատարելագործմանը՝ մարդու իրավունքների համատեքստում և ծառայություններ ստացող անձանց արժանապատվության հանդեպ հարգանքի դրսևորմամբ:

Ի նկատի ունենալով վերոնշյալը, սույն փաստաթղթում ներառվել են «Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչը, սոցիալական աշխատանքի մասնագետների պրակտիկային, սոցիալական աշխատանքի սուպերվիզիային առաջադրվող չափորոշիչները, սոցիալական աշխատանքի էթիկական չափորոշիչները ինչպես նաև չափորոշիչների խախտման դեպքում կիրառվող ընթացակարգերը: Հաշվի առնելով սոցիալական հիմնախնդիրների լուսաբանման ոլորտում ներկայումս տիրող իրավիճակը, սույն փաստաթղթում տեղ են գտել նաև սոցիալական հիմնախնդիրների լուսաբանմանն առաջադրվող չափորոշիչները:

Այսպիսով, ազգային մակարդակում սոցիալական աշխատանքի մասնագետների արդյունավետ պրակտիկայի սկզբունքների, անհրաժեշտ հմտությունների, գիտելիքների և արժեքների սահմանման միջոցով, սույն փաստաթուղթը նպատակ է հետապնդում.

- Նպաստել սոցիալական աշխատանքի կրթության և պրակտիկայի ներդաշնակեցմանը
- Խթանել գիտելիքահեն պրակտիկայի կազմակերպումը
- Նպաստել սոցիալական աշխատանքի պրակտիկայի կատարելագործմանը
- Հստակեցնել սոցիալական աշխատողների պրակտիկ գործունեությունից սպասվող ակնկալիքները
- Նպաստել մասնագիտական ռեսուրսների օգտագործման արդյունավետության մեծացմանը
- Ապահովել սոցիալական աշխատանք մասնագիտության և մասնագետների պաշտպանությունը:

Ի՞ՆՉ Է ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Սոցիալական աշխատանք մասնագիտության պարադիգմատիկ հրապարակայնությունը հնարավորություն է տալիս սոցիալական աշխատողին գործել աստիճանաբար փոփոխվող, յուրահատուկ պատմական և քաղաքական համատեքստում, միևնույն ժամանակ, ձգտել ունիվերսալության, գիտական հուսալիության, մասնագի-տական ինքնավարության և բարոյական պատասխանատվության:

Lorenz, 2001թ.

Համաձայն սոցիալական աշխատողների միջազգային ասոցիացիայի սահմանման՝

Սոցիալական աշխատանք մասնագիտությունը նպաստում է սոցիալական փոփոխություններին, մարդկային փոխհարաբերություններում առկա հիմնախնդիրների հաղթահարմանը և մարդկանց ներուժի ու կարողությունների զարգացմանը: Տեսական մոտեցումները հիմք ընդունելով՝ սոցիալական աշխատանքը միջամտում է այն դեպքերում, երբ մարդիկ դժվարություններ են ունենում իրենց միջավայրի հետ հարաբերություններ կառուցելիս: Մարդու իրավունքների և սոցիալական արդարության սկզբունքները համարվում են սոցիալական աշխատանքի հիմնասյուները:

Սոցիալական աշխատանք մասնագիտությունը հիմնվում է մարդկային վարքի, զարգացման և սոցիալական համակարգերի տեսությունների վրա՝ բարդ իրավիճակները վերլուծության ենթարկելու և անհատական, կազմակերպական, սոցիալական և մշակութային փոփոխությունները խթանելու նպատակով:

Սոցիալական աշխատողները հանդիսանում են ընդհանուր հասարակության, անհատների, ընտանիքների և համայնքների կյանքում փոփոխության գործակալներ:

Սոցիալական աշխատանքի պրակտիկ գործունեության հիմնական բնութագրիչները.

- Այն ուղղված է հասարակությունում առկա սոցիալական հիմնախնդիրների, խոչընդոտների, անհավասարության, անարդարության հաղթահարմանը:
- Արձագանքում է ճգնաժամերին, արտակարգ իրավիճակներին, ինչպես նաև առօրյա անհատական և սոցիալական հիմնախնդիրներին:
- Ենթադրում է համագործակցություն ծառայությունների սպառողների ՝ շահառուների հետ:
- Կարևոր դեր է խաղում սոցիալական ռազմավարությունների, միջմասնագիտական համագործակցության և բանակցությունների վարման գործընթացներում:
- Նպաստում է սոցիալական մեկուսացման կանխարգելմանը, հասարակության ինտեգրմանը և համախմբմանը:
- Համարվում է դինամիկ մասնագիտություն, որը պարբերաբար ենթակա է կատարելագործման և արդիականացման՝ հասարակության ներկայացուցիչների փոփոխվող կարիքներին համապատասխան:

Մարդու իրավունքների իրացումը ենթադրում է հարգանք բոլոր նրանց նկատմամբ, ում այդ դրույթները վերաբերում են, և պահանջում է մասնագիտական հմտություններ՝ ձևավորելու մասնագիտական երկխոսություն այդ դրույթների շուրջ:
Սոց. աշխատանքի պրակտիկայի եվրոպական ստանդարտներ

Այսպիսով, սոցիալական աշխատանքը առանձնահատուկ նշանակություն ունի հասարակության առաջընթացի և սոցիալական դրական փոփոխությունների իրականացման համար: Սոցիալական աշխատանք մասնագիտությունը ուղղված է սոցիալական աջակցությանը, ծառայում է կանխարգելիչ, զարգացման, պաշտպանիչ, թերապևտիկ նպատակների:

Սոցիալական աշխատանքի հետևյալ հիմնական ***նպատակները.***

- Մարտահրավեր նետել հասարակությունում առկա խոչընդոտներին, որոնք դժվարեցնում են մարդկանց հիմնական պահանջմունքների բավարարումը, անհավասարությանը և անարդարության դրսևորումներին:
- Նպաստել սոցիալապես մեկուսացած, սահմանային վիճակում գտնվող, խոցելի, ռիսկային խմբերի ներառմանը հասարակություն:
- Աջակցել և սովորեցնել մարդկանց օգտվել անհրաժեշտ ծառայություններից և ռեսուրսներից:
- Աջակցել այն անհատներին և խմբերին, ովքեր չեն կարող ինքնուրույն իրենց մասին հոգ տանել:
- Մշակել և իրականացնել քաղաքականություն, որը կնպաստի մարդկանց բարեկեցությանը, զարգացմանը, իրավունքների պաշտպանությանը և կապահովի կոլեկտիվ սոցիալական ներդաշնակություն և սոցիալական կայունություն:
- Ապահովել հարգանք հասարակության տարբեր խմբերում ընդունված ավանդույթների, մշակույթի, գաղափարների, հավատալիքների նկատմամբ:
- Պլանավորել, կազմակերպել և կառավարել զանազան գործընթացներ՝ ուղղված վերոնշյալ նպատակներից յուրաքանչյուրի իրագործմանը:[1]

Սոցիալական աշխատանքի ***միջամտության տեսակներն են՝***

- Կլինիկական սոցիալական աշխատանք
- Սոցիալ-մանկավարժական աշխատանք
- Խորհրդատվություն
- Ընտանեկան թերապիա
- Խմբային աշխատանք
- Աջակցություն համայքնում առկա ռեսուրսների և ծառայությունների ձեռքբերման հարցում
- Սոցիալական վարչարարություն
- Համայնքային աշխատանք և կազմակերպում
- Մասնակցություն սոցիալ-քաղաքական գործընթացներին՝ սոցիալական քաղաքականության և տնտեսական զարգացման վրա ազդելու նպատակով:[2]

[1] Սոցիալական աշխատանքի կրթության և վերապատրսատման գլոբալ ստանդարտներ/IFSW

ՄԱՍ 1

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ

<u>Հիմնավորում</u>

Սոցիալական աշխատողների միջազգային ֆեդերացիայի կողմից բոլոր երկրներում սոցիալական աշխատողներին առաջադրվող կրթական նվազագույն պահանջը հանդիսանում է սոցիալական աշխատանքի բակալավրի աստիճանը: Հետևաբար, սոցիալական աշխատողը այն մասնագետն է, ով ունի սոցիալական աշխատանքի բակալավրի կամ մագիստրոսի որակավորում՝ շնորհված լիազորված ԲՈՒՀ-ի լիազորված մարմնի կողմից: Փաստաթղթում ներկայացվում է ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված «Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչները:

Սոցիալական աշխատանքի ակադեմիական կրթության և պրակտիկայի միջև հավասարակշռություն հաստատելու հենասյունը սույն կրթական չափորոշիչներն են:

1. «Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ բակալավրիատի հիմնական բնութագիրը

1.1 Շրջանավարտի որակավորումը՝ բակալավր:

1.2 «Սոցիալական աշխատանքի» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի յուրացման նորմատիվային ժամկետը 4 տարի է:

1.3 Շրջանավարտի որակավորման բնութագիրը

Մասնագիտական գործունեության բնագավառի և օբյեկտների բնութագիրը.

Սոցիալական աշխատանքի բակալավրիատը նպատակ ունի տալ ուսանողներին բավարար մասնագիտական գիտելիքներ և հմտություններ, նրանց մոտ ձևավորել համապատասխան արժեքային կողմնորոշում, որպեսզի նրանք կարողանան որակյալ

[2] Սոցիալական աշխատանքի պրակտիկայի եվրոպական ստանդարտներ:

սոցիալական ծառայություններ մատուցել սոցիալական աջակցության կարիք ունեցող մարդկանց՝ անհատներին, խմբերին և համայնքներին:

Սոցիալական աշխատանքի բակալավրի գործունեությունը ներառում է տարբեր սոցիոմշակութային, քաղաքական և ազգային միջավայրերում մարդու և խմբի կենսագործունեության ուսումնասիրություն և վերլուծություն, մարդու, խմբերի և համայնքների բազմակողմանի պահանջմունքների բացահայտում և բավարարում, աջակցության և պաշտպանության կարիք ունեցող համայնքների, տարբեր տարիքային, սեռային, կրոնական և էթնիկ խմբերի, առանձին անհատների սոցիալական ցանցի զարգացում և սոցիալական իրավունքների պաշտպանություն: Սոցիալական աշխատանքի բակալավրը մասնագիտական գործունեություն է ծավալում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպություններում, ծանոթ է սոցիալական ծառայությունների գործառնման սկզբունքներին:

«Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ բակալավրը «Մասնագետների, ղեկավարների և այլ ծառայողների որակավորման տեղեկատուի» պահանջներին համապատասխան՝ ԲՈՒՀ-ն ավարտելուց անմիջապես հետո կարող է զբաղեցնել հետևյալ պաշտոնները՝սոցիալական աշխատող, սոցիալական ծառայող:

1.4 Շրջանավարտի կրթությունը շարունակելու հնարավորությունը

«Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրը յուրացրած բակալավրը պատրաստ է կրթությունը շարունակելու՝

- կրճատված ժամկետներում՝ ստանալու բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան 2-րդ մասնագիտության գծով,
- մագիստրատուրայում՝ ստանալու մագիստրոսի որակավորման աստիճան:

2. Դիմորդի պատրաստականության մակարդակին ներկայացվող պահանջները

2.1 Դիմորդի նախորդող կրթական մակարդակը՝

միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն կամ միջին մասնագիտական կրթություն:

2.2 Դիմորդը պետք է ունենա՝

վկայական միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության, կամ միջին մասնագիտական կրթության, կամ նախնական մասնագիտական կրթության մասին, որում կա գրառում դիմորդի միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ստանալու մասին կամ բարձրագույն մասնագիտական կրթության մասին:

3. «Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրին ներկայացվող ընդհանուր պահանջները

3.1. Բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը մշակվում է սույն պետական կրթական չափորոշչով և ներառում է՝ մասնագիտության ուսումնական պլանը, ուսումնական դասընթացների և պրակտիկաների ծրագրերը:

3.2. Բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնի իրականացման պայմաններին և ուսումնառության ժամկետներին ներկայացվող պահանջները կանոնակարգվում են սույն պետական կրթական չափորոշչով:

3.3. Բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը ձևավորվում է հանրապետական, բուհական, ուսանողի կողմից ընտրովի և ֆակուլտատիվ բաղադրիչների դասընթացներից: Ուսանողի կողմից ընտրովի դասընթացները յուրաքանչյուր կրթաբլոկում բովանդակորեն պետք է լրացնեն հանրապետական բաղադրիչում նշված դասընթացները:

3.4. Բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը պետք է նախատեսի հետևյալ կրթաբլոկներում ընդգրկված դասընթացների ուսումնասիրումը՝

- հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական՝ ՀՍՏ
- մաթեմատիկական և բնագիտական՝ ՄԲ
- ընդհանուր մասնագիտական՝ ԸՄ
- ինչպես նաև եզրափակիչ պետական որակավորումը:

3.5. Բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի բուհական բաղադրիչի բովանդակությունը պետք է ապահովի շրջանավարտի պատրաստությունը սույն պետական կրթական չափորոշչով սահմանված որակավորման բնութագրի համաձայն:

4. «Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնին ներկայացվող պահանջները

4.1. Առկա ձևով ուսուցման դեպքում լսարանային պարապմունքներին պետք է տրամադրվի յուրաքանչյուր ուսումնական դասընթացին հատկացվող ժամաքանակի 50%-ից ոչ պակասը, իսկ հեռակա ձևով ուսուցման դեպքում՝ 10%-ից ոչ պակասը (Առարկայացանկին կարող եք ծանոթանալ Հավելված 1-ում):

5. «Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի յուրացման ժամկետները

5.1. Բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի յուրացման ժամկետը, ներառյալ ուսանողի հետազոտական աշխատանքը, առկա ուսուցման ձևով 200 շաբաթ է, որից.

- տեսական ուսուցումը՝ **120 շաբաթ,**
- քննաշրջանները՝ **30 շաբաթ,**
- պրակտիկաները՝ **21 շաբաթ**,
- եզրափակիչ պետական որակավորումը՝ ներառյալ ավարտական աշխատանքի պատրաստումը և պաշտպանությունը՝ **6 շաբաթ,**
- արձակուրդները (ներառյալ հետբուհական արձակուրդը)՝ **40 շաբաթ**:

Ավարտական աշխատանքի կատարման ժամանակացույցը, ընթացիկ վերահսկման և ատեստավորման ձևը, պաշտպանության թույլատրման կարգը սահմանում է բուհը (ֆակուլտետը), որը հաստատում է բուհի գիտական խորհուրդը:

5.2. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ունեցող անձանց համար բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրերի յուրացման ժամկետները հեռակա ուսուցման ձևով երկարացվում են մինչև 1 տարով՝ սույն պետական կրթական չափորոշիչի թ.1.2-ով սահմանված ժամկետի նկատմամբ:

5.3. Ուսանողի ուսումնական բեռնվածքի առավելագույն ծավալը սահմանվում է շաբաթական 54 ժամ՝ ներառյալ լսարանային և արտալսարանային (ինքնուրույն) աշխատանքները:

5.4. Առկա ուսուցման ձևով սովորող ուսանողի լսարանային պարապմունքների ծավալը չպետք է գերազանցի շաբաթական 34 ժամ: Նշված ծավալում չեն ընդգրկվում ֆիզիկական դաստիարակության և ֆակուլտատիվ դասընթացների դասաժամերը: Ուսումնական տարվա տեսական ուսուցման տևողությունը 34 շաբաթ է:

5.5. Հեռակա ուսուցման ձևով սովորող ուսանողի համար պետք է ապահովվի տարեկան 160 ժամից ոչ պակաս ծավալով դասախոսների հետ պարապմունքներ անցկացնելը:

5.6. Ուսումնական տարվա արձակուրդները պետք է 7-10 շաբաթ լինեն, այդ թվում՝ 2 շաբաթից ոչ պակաս՝ ձմեռային քննաշրջանից հետո:

6. «Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի մշակման և իրականացման պայմաններին ներկայացվող պահանջները

6.1. Բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի մշակմանը ներկայացվող պահանջները.

6.1.1. Սույն պետական կրթական չափորոշիչի հիման վրա բուհն ինքնուրույն է մշակում և հաստատում բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը:

Ուսումնական դասընթացի բաղադրիչների տեսակները (դասախոսություն, գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքներ, տնային և կուրսային աշխատանքների խորհրդատվություն և այլն) և ծավալները՝ դասընթացին հատկացված դասաժամերի շրջանակում սահմանում է բուհը: Ուսուցման ողջ շրջանում ուսումնական ժամաքանակի ընդհանուր հաշվեկշռում ակտիվ մեթոդներով ուսանողի տեսական ուսուցումը չպետք է ցածր լինի 25%-ից:

Ուսանողի գիտելիքների ստուգման և գնահատման համակարգի տեսակն ընտրում է բուհը: Տվյալ դասընթացից ուսանողի գիտելիքների եզրափակիչ գնահատականը չպետք է հիմնավորվի միայն վերջին քննության (ստուգարքի) արդյունքով, այն պետք է հաշվի առնի ուսանողի ակտիվությունը դասընթացի ժամանակ և ընթացիկ առաջադիմությունը կիսամյակի(ների) ընթացքում: Եզրափակիչ գնահատման դեպքում գնահատականը ձևավորվում է ընթացիկ առաջադիմությամբ, միջանկյալ ստուգումներով և եզրափակիչ քննության (ստուգարքի) արդյունքով:

Քննությունների անցկացման հիմնական ձևը գրավոր և գրավոր-բանավորն է: ԲՈՒՀ-ի իրավունքն է ուսումնական դասընթացների եզրափակիչ ստուգման եղանակի (ստուգարք կամ քննություն) ընտրությունը և ձևի սահմանումը:

Ուսանողների գիտելիքների ընթացիկ գնահատման համակարգում բուհն օգտագործում է իրեն նպատակահարմար գնահատման սանդղակ: Դասընթացից եզրափակիչ գնահատական նշանակելու դեպքում անհրաժեշտ է անցնել գիտելիքների գնահատման ավանդական համակարգին («գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար»,«ստուգված», «չստուգված»):

Կուրսային աշխատանքը դիտարկվում է որպես դասընթացի ուսումնական բաղադրիչ:

Մասնագիտության ուսումնական պլանով (հավելված 2) նախատեսված բոլոր ուսումնական դասընթացների, կուրսային աշխատանքների և պրակտիկաների համար պարտադիր է եզրափակիչ գնահատականի նշանակումը:

6.1.2. Մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու դեպքում բուհն իրավասու է՝

- 5%-ի սահմաններում փոփոխել դասընթացների կրթաբլոկներին հատկացրած ժամաքանակները, իսկ առանձին դասընթացներինը՝ մինչև 10%-ի սահմաններում,
- ձևավորել հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացների կրթաբլոկ, որն ունի առարկաների պարտադիր հանրապետական բաղադրիչ,
- ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀUS) դասընթացների դասավանդումն իրականացնել հեղինակային դասախոսությունների, անհատական և կոլեկտիվ գործնական պարապմունքների, առաջադրանքների և սեմինարների ձևով՝ բուհի մշակած ծրագրերով, հաշվի առնելով բուհի մասնագիտական առանձնահատկությունները, դասախոսների հետազոտական ուղղվածությունը և մասնագիտական նախապատվությունները, որոնք կապահովեն կրթաբլոկի դասընթացների թեմատիկայի լուսաբանումը, սահմանել ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀUS), ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական (ՄԲ) կրթաբլոկներում ընդգրկված դասընթացների առանձին բաժինների դասավանդման անհրաժեշտ խորությունը:
- առանձին դեպքերում, մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները մշակող ԿԳՆ գիտամեթոդական հանձնաժողովի հետ համաձայնեցված՝ <u>040100</u>՝ «Սոցիալական աշխատանք» մասնագիտության համար բուհերն իրավունք ունեն մինչև 20%-ի սահմանում փոփոխել ընդհանուր մասնագիտական դասընթացների (ԸՄԴ) կրթաբլոկի ժամաքանակը, իսկ առանձին դասընթացները՝ մինչև 40%-ի սահմաններում:

6.2. Ուսումնական գործընթացի կադրային ապահովման պահանջները.

Բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրերի իրականացումը պետք է ապահովվի գիտամանկավարժական կադրերով, որոնք, որպես կանոն, ունեն դասընթացների դասավանդման ուղղվածությանը համապատասխանող բազային կրթություն և հետևողականորեն զբաղվում են հետազոտական և գիտամեթոդական գործունեությամբ: Հատուկ մասնագիտացնող դասընթացներ դասավանդող դասախոսները, որպես կանոն, պետք է ունենան գիտական աստիճան (գիտական կոչում) և/կամ համապատասխան գործունեության ոլորտում աշխատանքի փորձ:

Գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսները պետք է կազմեն պրոֆեսորադասախոսական կազմի 50%-ից ոչ պակասը (բացառությամբ օտար լեզուներ դասավանդողների):

Հիմնական հաստիքային դասախոսները պետք է կազմեն ընդհանուրի 50%-ից ոչ պակասը:

6.3. Ուսումնական գործընթացի ուսումնամեթոդական ապահովման պահանջները.

Բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրերի իրականացումը պետք է ներառի ուսանողների կողմից մասնագիտական դասընթացների լաբորատոր, գործնական (սեմինար) աշխատանքների կատարում (աշխատանքների ցանկը պարտադիր տրվում է), ներառյալ որպես պարտադիր բաղադրիչ՝ համակարգչային կիրառական ծրագրային փաթեթների օգտագործմամբ գործնական առաջադրանքների կատարում: Պարտադիր պահանջ է նաև անհրաժեշտ ինֆորմացիոն բազայի ստեղծումը, որն ապահովում է բարձրորակ մասնագետի պատրաստումը և ուսանողի մուտքը տարբեր ինֆորմացիոն աղբյուրներ, ներառյալ համացանցը:

Բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրերի իրականացումը պետք է ապահովվի յուրաքանչյուր ուսանողի մուտքով դեպի գրադարանային ֆոնդեր և տվյալների բազաներ, որոնք ըստ բովանդակության համապատասխանում են հիմնական կրթական ծրագրով նախատեսված դասընթացների լրիվ ցանկին, նույն դասընթացների բաղադրիչներին (դասախոսություններ, գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքներ, կուրսային և ավարտական աշխատանքների խորհրդատվություն, պրակտիկաների ծրագրեր) նվիրված մեթոդական ձեռնարկների և ցուցումների առկայությամբ, ինչպես նաև տեսալսողական, բազմամիջավայրային նյութերով և ցուցադրական ձեռնարկներով:

Բուհի գրադարանը պետք է հագեցված լինի մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների ուսումնամեթոդական համալիրներով, մասնագիտության նորմատիվ-իրավական ակտերով, տեղեկատու գրականությամբ և չափորոշիչներով:

6.4. Ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման պահանջները

Բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիր իրականացնող բուհը պետք է ունենա նյութատեխնիկական բազա, որը համապատասխանում է գործող սանիտարահիգիենիկ նորմերին և հակահրդեհային կանոններին, ապահովում է օրինակելի ուսումնական պլաններով նախատեսված լաբորատոր, սեմինար, գործնական պարապմունքների և միջդասընթացային պատրաստման բոլոր ձևերի և ուսանողների հետազոտական աշխատանքների կատարումը:

6.5. Պրակտիկաների կազմակերպման պահանջները

Ուսուցման ընթացքում մասնագիտության գծով գործնական ունակություններ, հմտություններ և փորձառություն ձեռք բերելու նպատակով պրակտիկան կազմակերպվում է սոցիալական ոլորտի տարբեր ծառայություններում, գործակալություններում և հաստատությունների ստորաբաժանումներում՝ նախապատվությունը տալով այն հիմնարկներին, որտեղ սոցիալական աշխատանքի ծառայություններ են մատուցվում բնակչության համապատասխան խմբերին, և կան պրակտիկայի կազմակերպման համար բարենպաստ նախադրյալներ:

7. «Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ շրջանավարտի պատրաստման մակարդակին ներկայացվող պահանջները

7.1. Շրջանավարտը պետք է կարողանա լուծել սույն պետական կրթական չափորոշչով սահմանված և իր որակավորմանը համապատասխանող խնդիրները:

Բակալավրը պետք է.

Ա. Բուհական բաղադրիչների գիտելիքների բնագավառում՝

- իմանա ՀՀ Սահմանադրությունը և իր բնագավառի օրենքները,
- ազատ տիրապետի մասնագիտական հայոց լեզվին (գրավոր և բանավոր) և հաղորդակցվի երկու օտար լեզուներով/այդ թվում՝ ռուսաց լեզվով/,
- ունենա պատկերացում առողջ ապրելակերպի մասին, տիրապետի ֆիզիկական կատարելագործման ունակություններին և հմտություններին,
- իմանա հայ ժողովրդի պատմությունը և արդի քաղաքագիտական կոնցեպցիաները,
- ծանոթ լինի համաշխարհային մշակույթին, տիրապետի վարվելաձևի կուլտուրային, իմանա էթիկական և իրավական այն նորմերը, որոնք կարգավորում են մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները,
- ունենա բավարար գիտելիքներ հոգեբանության և մանկավարժության վերաբերյալ,
- ծանոթ լինի ժամանակակից փիլիսոփայական ուղղություններին, սոցիալական գլոբալ զարգացումներին,
- գիտենա տնտեսագիտության տեսության հիմնադրույթները, մակրո- և միկրոտնտեսության օրենքները:

Բ. Բնագիտության և մաթեմատիկայի բնագավառում՝

- ծանոթ լինի ժամանակակից բնագիտության հիմնական սկզբունքներին և հայեցակարգերին, բնապահպանական գլոբալ և տարածքային հիմնախնդիրներին,
- տիրապետի մաթեմատիկայի հիմնական բաժիններին, հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության մեթոդներին, մաթեմատիկական մոդելավորման եղանակներին,
- տիրապետի ինֆորմացիայի հավաքման, պահպանման և մշակման համակարգչային մեթոդներին և կարողանա օգտագործել ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաներ,
- իմանա քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում գործելու կանոնները
- տիրապետի արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բժշկական օգնության ունակություններին,
- գիտենա էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքները:

Գ. Մասնագիտական գործունեության բնագավառում

- ծանոթ լինի մարդ-հասարակություն-միջավայր համակարգին, այդ համակարգի գործառնման առանձնահատկություններին, մարդկանց կյանքում տարբեր կենսական դժվարությունների առաջացման և այդ դժվարությունների հաղթահարման գործում իր դերին
- ծանոթ լինի սոցիալական գիտություններում/սոցիոլոգիա, հոգեբանություն, իրավագիտություն և այլն/ ստեղծված հիմնական տեսություններին, որոնք օգտագործվում են սոցիալական աշխատանքի ոլորտում տարբեր խնդիրներ լուծելիս, երբ նա գնահատում է անհատների և նրանց ընտանիքների, խմբերի և համայնքների կարիքները և կյանքի պայմանները, վերլուծում ներընտանեկան և ներխմբային գործընթացները, գործ է ունենում մարդկանց տարիքային, սեռային, մշակութային և այլ առանձնահակտությունների հետ
- կարողանա կազմակերպել իր աշխատանքը գիտական հիմունքներով, տիրապետի իր մասնագիտական գործունեության մեջ կիրառվող ինֆորմացիայի հավաքման, մշակման ու պահպանման համակարգչային մեթոդներին
- կարողանա վերաիմաստավորել գործունեության նպատակները և կուտակված փորձը՝պայմանավորված գիտության զարգացմամբ և սոցիալական պրատիկայի փոփոխմամբ, կարողանա ձեռք բերել նոր գիտելիքներ՝ օգտագործելով ժամանակակից կրթական , տեղեկատվական տեխնոլոգիաներ
- հասկանա իր մասնագիտության էությունը ու նրա սոցիալական նշանակալիությունը իր գործունեության կոնկրետ բնագավառը բնորոշող գիտաճյուղերի հիմնահարցերը, տեսնի նրանց փոխակապվածությունը գիտելիքների ամբողջական համակարգում
- կարողանա դնել մասնագիտական գործառությունների իրացման հետ կապված նպատակներ և ձևակերպել խնդիրներ, դրանց լուծման համար օգտագործել գիտական մեթոդները
- պատրաստ լինի համագործակցելու գործընկերների հետ և յուրացնել թիմային աշխատանքի կանոնները
- մեթոդապես և հոգեբանորեն պատրաստ լինի իր մասնագիտական գործունեության ձևի և բնույթի փոփոխմանը, միջմասնագիտական նախագծերի մշակմանը
- կարողանա օգնող հարաբերություններ հաստատել տարբեր տարիքի, սեռի, կարգավիճակ ունեցող մարդկանց, ընտանիքների, խմբերի հետ
- կարողանա կապ հաստատել համայնքի անդամների և համայնքային ծառայությունների հետ, ներառվել համայնքային հարաբերությունների մեջ
- կարողանա մարդկանց և խմբերին սոցիալական ծառայություններ մատուցելու նպատակով նրանց շուրջը ստեղծել և զարգացնել սոցիալական ցանց՝ համակարգելով մարդկանց և նրանց միջավայրում գտնվող անձանց, կազմակերպությունների, հաստատությունների համագործակցությունը
- կարողանա պաշտպանել ռիսկային վիճակում հայտնված և սոցիալապես խոցելի մարդկանց՝ երեխաների, հաշմանդամների, տարեցների, փախստականների, ազատազրկվածների և այլոց, իրավունքները

- տեղեկատվություն ունենա գործող ծառայությունների և առկա ռեսուրսների մասին և անհրաժեշտության դեպքում սոցիալական տեղեկատվություն տրամադրի կազմակերպությունների, ծառայությունների և ռեսուրսների մասին, խորհրդատվություն կազմակերպի այցելուի հետ կապված ծառայությունների և մարդկանց համար
- կարողանա առանձահատուկ խնդիրներ և կարիքներ ունեցող մարդկանց համար ստեղծել սովորելու և զարգացման հնարավորություններ, նպաստել նրանց սոցիալական գործառնման բարելավմանը
- կարողանա օգնել մարդկանց զարգացնելու և օգտագործելու իրենց սեփական կարողությունները, օգնել՝ նրանց մոտ հասնելու ցանկալի փոփոխությունների
- կարողանա համագործակցել գործընկերների, այլ ծառայությունների աշխատակիցների հետ և գնահատել/որոշել մարդկանց կարիքները, իրավունքները, առավելությունները, պատասխանատվության աստիճանը, ռեսուրսները
- կարողանա ճանաչել և վերլուծել բռնության, վնաս հասցնելու, իրավախախտ վարք ցուցաբերելու ռիսկի աստիճանը և միջամտության արդյունավետության մակարդակը
- կարողանա իրականացնել սոցիալական վերահսկողություն որդեգրված, խնամակալության և խնամատարության հանձնված երեխաների, հաշմանդամների, տարեցների կյանքի պայմանների նկատմամբ
- կարողանա ընտրել և զարգացնել մարդկանց սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված արդյունավետ տեխնոլոգիաներ և միջոցներ
- կարողանա համագործակցել տարբեր ծառայությունների հետ և ստեղծել խնամքի կազմակերպման, աջակցության ցուցաբերման, պաշտպանության և վերահսկողության ծրագրեր
- ունենա կոլեկտիվի հետ աշխատելու հմտություններ, կարողանա համագործակցել աշխատանքային ընկերների հետ
- կարողանա հայթայթել անհրաժեշտ միջոցներ, պլանավորել և վերահսկել դրանց արդյունավետ օգտագործման ընթացքը և գնահատել օգտագործման արդյունավետությունը
- կարողանա գնահատել մատուցվող ծառայությունների որակն ու արդյունավետությունը
- կարողանա հավաքել, վերլուծել և ներկայացնել սոցիալական տեղեկատվություն:

Բակալավրի հատուկ պատրաստությանը վերաբերող պահանջները սահմանում է տվյալ մասնագիտացումն առաջադրող ԲՈՒՀ-ը՝ ՀՀ ԿԳՆ մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները մշակող գիտամեթոդական հանձնաժողովի հետ համաձայնեցրած, որոնք ՀՀ ԿԳՆ–ում մասնագիտացումը հաստատելուց հետո միասնական են դառնում այլ բուհերի համար, բխում են մասնագիտացման կրթաբլոկի բովանդակությունից և տվյալ մասնագիտացմամբ մասնագետներ պատվիրած կազմակերպության գործառնություններից:

Նշված փորձառությունները ներառում են՝

- հետազոտական աշխատանք վարելու, վերացական տրամաբանական մտածողության և քննադատական վերլուծության ունակություններ,
- անծանոթ պայմաններում առաջացած ոչ կառուցողական հիմնահարցերի բացահայտման, հաղթահարման և վերջնական լուծման, սեղմ ժամանակացույցով աշխատանքներ կազմակերպելու ունակություն,
- մասնագիտական գործունեության բնագավառում նորամուծությունների նկատմամբ ընկալունակության ցուցաբերում:

Բակալավրի՝ մարդկանց հետ աշխատելու փորձառությունը ենթադրում է նրա ունակությունները՝

- այլ անձանց հետ շփվելու, նրանց հետ համագործակցելու,
- խնդիրներ ձևակերպելու և դրանք ենթականերին պատվիրակելու,
- մարդկանց ստեղծագործական աճի ձգտումը խրախուսելու և զարգացումն ապահովելու,
- ծագած տարաձայնությունները և բախումները լուծելու,
- տարբեր զարգացման և մտավոր մակարդակի տեր մարդկանց հետ համագործակցելու,
- մասնագիտական հարցերի շրջանակներում ընդունելի որոշումների հասնելու նպատակով բանակցություններ վարելու,
- տարաբնույթ և տարասեռ մշակութային միջավայրերում աշխատելու

և այլն:

Բակալավրի՝ ինֆորմացիայի հետ աշխատելու փորձառությունը պահանջում է պարտադիր հմտություններ՝

- պաշտոնական և ոչ պաշտոնական իրավիճակներում սեփական կարծիքը գրավոր և բանավոր ձևերով շարադրելու, քննարկելու և գործուն կարգով պաշտպանելու,
- լեզվական և մշակութային տարբերությունների հաշվառմամբ գրավոր ինֆորմացիան լսելու և վերլուծելով ընկալելու,
- բանավոր, տպագրված և էլեկտրոնային աղբյուրներից ստացված ինֆորմացիան որոնելու, ստանալու, համակարգելու, գրավոր ձևակերպելու և օգտագործելու:

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործման գծով՝

Բակալավրը պետք է ծանոթ լինի տվյալների մշակման երկուսից ոչ պակաս համակարգերի, համակարգչային և բազմաօգտագործման տեղային ցանցային համակարգերին, ինչպես նաև կարողանա կատարել ինֆորմացիայի որոնում տվյալների ցանցային բազաներում (www), օգտվել էլեկտրոնային փոստից, տվյալների բազաների փաթեթից:

Բակալավրը պետք է հասկանա իր մասնագիտության էությունը և սոցիալական նշանակալիությունը, իր որակավորման շարունակական բարձրացման անհրաժեշտությունը հետբուհական և լրացուցիչ կրթություն ստանալու կամ էլ նոր գիտելիքների ինքնուրույն տիրապետման միջոցով:

7.2. Բակալավրի եզրափակիչ պետական որակավորման պահանջները

7.2.1.«Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ բակալավրի եզրափակիչ պետական որակավորումը ներառում է՝

ավարտական աշխատանքի պաշտպանությունը և պետական քննության հանձնումը, որոնք թույլ են տալիս բացահայտելու շրջանավարտի տեսական և գործնական պատրաստվածությունը սույն պետական կրթական չափորոշիչներով սահմանված մասնագիտական խնդիրների լուծման բնագավառում:

7.2.2. Բակալավրի ավարտական աշխատանքին ներկայացվող պահանջները.

«**Սոցիալական աշխատանք**» մասնագիտությամբ բակալավրի ավարտական աշխատանքն ավարտուն մի մշակում է, որն ուղղված է սոցիալական աշխատանքի և սոցիալական քաղաքականության ոլորտներում որոշակի մի պրոբլեմի ուսումնասիրմանը և լուծմանը կամ լուծման եղանակի առաջադրմանը: Հեղինակը, հենվելով հարցին առնչվող գիտական գրականության վրա, պետք է դրսևորի պրոբլեմը ձևակերպելու, այն լուծելու մեթոդները որոշելու, սեփական դատողությունների ընթացքը հետևողականորեն և գրագետ կերպով շարադրելու ունակություն:

Բովանդակային առումով ավարտական աշխատանքը պետք է՝

- բացահայտի շրջանավարտի տեսական գիտելիքները, որոնք թույլ են տալիս ինքնուրույն լուծելու մասնագիտական բնույթի խնդիրներ,
- ցույց տա շրջանավարտի կողմից գիտական և համակարգային վերլուծության մեթոդների յուրացման աստիճանը, տեսական ընդհանրացումներ և գործնական եզրակացություններ կատարելու ունակությունը,
- կրի ստեղծագործական բնույթ՝ հավաստի վիճակագրական տվյալների օգտագործմամբ,
- բացահայտի շրջանավարտի ինքնուրույն աշխատելու ունակությունները
- համապատասխանի նյութի տրամաբանված և հստակ շարադրման պահանջներին և հենվի հավաստի փաստերի վրա,
- արտացոլի շրջանավարտի տեղեկատվության որոնման, ընտրության, համակարգման և մշակման արդի մեթոդները օգտագործելու, բնագավառի նորմատիվ-իրավական ակտերի հետ աշխատելու ունակությունը,
- ձևավորված լինի հրատարկչական արդի նորմատիվներին և պահանջներին համապատասխան, ունենա հետազոտական աշխատանքի հաշվետվությանը բնորոշ կառուցվածք:

7.2.3. Պետական քննությանը ներկայացվող պահանջները.

Եզրափակիչ որակավորման (պետական) քննության բովանդակությունը, անցկացման ձևը և ուսանողների գիտելիքների գնահատման չափանիշները սահմանում է բուհը (ֆակուլտետը) և հաստատում բուհի (ֆակուլտետի) գիտական խորհուրդը: Նրանում պարտադիր կարգով ներառվում են հարցեր մասնագիտության հետևյալ հիմնական ուսումնական դասընթացներից՝

1. *Սոցիալական աշխատանքի պատմություն*
2. *Սոցիալական աշխատանքի հիմունքներ*
3. *Սոցիալական աշխատանքի մեթոդներ*
4. *Սոցիալական աշխատանքի մոդելներ*
5. *Հետազոտական մեթոդները սոցիալական աշխատանքում*
6. *Սոցիալական աշխատանքի ուղղություններ 1,2*
7. *Սոցիալական քաղաքականության հիմունքներ*
8. *Սոցիալական աշխատանք խոցելի խմբերի հետ 1,2,3*
9. *Ինստիտուցիոնալ սոցիալական աշխատանք 1,2,3*
10. *Սոցիալական աշխատանքի տեխնոլոգիաներ*

Մասնագիտական դասընթացների ցանկը տես՝ Հավելված 1 –ում:

ՄԱՍ 2

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Արդյունավետ պրակտիկայի ապահովման համար սոցիալական աշխատողը պետք է զինված լինի իր շահառուների մասին/անհատ, խումբ, ընտանիք, համայնք, հասարակություն/անհրաժեշտ տեղեկատվությամբ, համապատասխան մասնագիտական գիտելիքներով ու դրանց կիրառման պրակտիկ հմտություններով:

Բաժին 1

Սոցիալական աշխատողի պրակտիկ գործունեության չափորոշիչները

Ա) Սոցիալական աշխատող - շահառու փոխհարաբերություններ

- Պաշտպանել ռիսկային իրավիճակում հայտնված և սոցիալապես խոցելի մարդկանց՝ երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների, փախստականների, ազատազրկվածների և այլոց իրավունքները,
- աջակցել շահառուների համար սովորելու և զարգանալու համար հնարավորությունների ստեղծմանը և նպաստել նրանց սոցիալական ինտեգրմանն ու իրավիճակի բարելավմանը,
- իրականացնել «սոցիալական դրական ուղեկցում» կամ դրական վերահսկողություն որդեգրված, խնամակալության և խնամատարության հանձնված երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների կյանքի պայմանների նկատմամբ,
- նպաստել շահառուի բարեկեցությանը, ծառայությունների հասանելիությանը և աջակցող ծրագրերի համապատասխանությանն ու արդյունավետությանը,
- ըստ իրավիճակի, արդյունավետ ճանապարհով ուղղորդել շահառուին,
- մասնագիտորեն գնահատել իրավիճակը և հասկանալ, թե երբ է անհրաժեշտ բացահայտել գաղտնի տեղեկատվությունը՝ շահառուների, ծառայություններ մատուցողների կամ երրորդ կողմի անվտանգությունը ապահովելու նպատակով,
- շահառուների հետ հաղորդակցվելիս՝ կիրառել միջանձնային հաղորդակցման, վերբալ և ոչ վերբալ հաղորդակցման տեխնիկաները,

- հասկանալ, թե ե՞րբ և ինչպե՞ս պետք է փոփոխության ենթարկվեն հաղորդակցման եղանակները, պայմանավորված մի շարք գործոններով, ներառյալ՝ շահառուի տարիքը, սեռը, էթնիկ պատկանելիությունը, մշակութային առանձնահատկություն-ները, կրոնական հավատալիքները, սոցիալ-տնտեսական կարգավիճակը, անձնային կարողությունները (սովորելու կարողություններ, ինքնավերահսկման, ինքնագնա-հատման կարողություններ և այլն):
- դրսևորել ակտիվ լսելու կարողություն,
- աշխատել շահառուների հետ, աջակցելով նրանց՝ գնահատել և արդարացված և համարժեք որոշումներ կայացնել սեփական կարիքների, ռեսուրսների, ստեղծված իրավիճակի, հանգամանքների, լուծման հնարավոր տարբերակների վերաբերյալ:

Բ) Սոցիալական աշխատող - աջակցող ցանց փոխհարաբերություններ

- Ձևավորել և զարգացնել աջակցող ցանց՝ համակարգելով մարդկանց և նրանց միջավայրում գտնվող անձանց, կազմակերպությունների, հաստատությունների համագործակցությունը:
- Հավաքագրել, վերլուծել և ներկայացնել համապատասխան տեղեկատվություն՝ կազմակերպությունների, ծառայությունների և ռեսուրսների մասին:
- Ընտրել և զարգացնել մարդկանց սոցիալական հիմնախնդիրների լուծմանն ուղղված արդյունավետ տեխնոլոգիաներ և միջոցներ:
- Բացահայտել անհրաժեշտ ռեսուրսները, պլանավորել և վերահսկել դրանց արդյունավետ օգտագործման ընթացքը և գնահատել օգտագործման արդյունավետությունը:

Գ) Սոցիալական աշխատող - մասնագիտություն փոխհարաբերություններ

Սահմանել հստակ նպատակներ և խնդիրներ, դրանց իրագործման համար օգտագործել գիտական մեթոդներ:

- Վերաիմաստավորել գործունեության նպատակները և կուտակված փորձը՝ համընթաց գիտական նորամուծություններին և փոփոխվող սոցիալական պրատիկային, ձեռք բերել նոր գիտելիքներ՝ օգտագործելով ժամանակակից կրթական, տեղեկատվական տեխնոլոգիաները,
- ձգտել սեփական փորձն ու գիտելիքները փոխանցել սոցիալական աշխատանքի կրթություն ստացող ուսանողներին կամ պրակտիկանտներին,
- գնահատել սեփական ծանրաբեռնվածության աստիճանը ու ռեսուրսները և գործել դրանց համապատասխան,
- հասկանալ ընթացիկ /գործող/ օրենսդրության և մասնագիտական պրակտիկայի միջև կապը,
- գիտակցել այլ մասնագետի կողմից իրականացվող և ռիսկ պարունակող մասնագիտական միջամտության կանխարգելման անհրաժեշտությունը,
- իրականացնել սեփական մասնագիտական գործառույթները՝ պահպանելով իրավական և էթիկական սահմանները,

- պահպանել գաղտնիության սկզբունքը և իմանալ գաղտնապահության ընդունելի հնարավոր սահմանները,
- կիրառել սուպերվիզիան/վերահսկողությունը սոցիալական աշխատանքի որակյալ պրակտիկայի ապահովման նպատակով,
- մասնակցել սոցիալական աշխատանքի պրակտիկայի պարբերական գնահատման գործընթացում և աուդիտորական ընթացակարգերում,
- օգտագործել սոցիալական աշխատանքի տեսությունները, մոդելները, մեթոդները՝ փոփոխություններին, զարգացմանը նպաստելու և բնակչության կենսապայմանների բարելավման նպատակով,
- ճանաչել հետազոտությունների և վերլուծությունների արժեքը և կարողանալ գնահատել և կիրառել դրանք՝ պրակտիկ դաշտը անհրաժեշտ գիտական տեղեկատվությամբ համալրելու նպատակով,
- ներգրավվել սոցիալ-քաղաքական գործընթացներում սոցիալական քաղաքականության և տնտեսական զարգացման վրա ազդելու նպատակով,
- նպաստել հասարակությունում փոփոխություններին՝ քննադատելով և հաղթահարելով անհավասարության դրսևորումները:

Դ) Սոցիալական աշխատող - հասարակություն փոխհարաբերություններ

- Նպաստել կայուն, ներդաշնակ և փոխադարձ հարգանքի վրա հիմնված հասարակության ձևավորմանը, որտեղ որտեղ մարդու իրավունքների ոտնահարման դեպքերը կհասցվեն նվազագույնի,
- ապահովել հարգանք, տարբեր ավանդույթների, մշակույթների, գաղափարախոսությունների, հավատալիքների և կրոնների ներկայացուցիչների նկատմամբ,
- օգնող հարաբերություններ հաստատել տարբեր տարիքի, սեռի, կարգավիճակ ունեցող մարդկանց, ընտանիքների, խմբերի հետ:

Ե) Սոցիալական աշխատող - ծառայություն փոխհարաբերություններ

- Համագործակցել գործընկերների, այլ կազմակերպությունների աշխատողների հետ և գնահատել (որոշել) մարդկանց կարիքները, իրավունքները, արտոնությունները, պատասխանատվության աստիճանը, ռեսուրսները,
- Խորհրդատվություն կազմակերպել և տեղեկատվություն տրամադրել շահառուի հետ կապված ծառայությունների և մարդկանց համար,
- բացահայտել տվյալ համայնքում սոցիալական ծառայությունների մատուցման ընթացքում տեղ գտնող անհավասարության և խտրականության դեպքերը, համապատասխան քայլեր նախաձեռնել դրանց հաղթահարման կամ ազդեցության չեզոքացման ուղղությամբ:

Արդյունավետ պրակտիկայի ապահովումը մեծապես կախված է սոցիալական աշխատողների շարունակական մասնագիտական զարգացման հնարավորություններից: Վերջինս ենթադրում է սոցիալական աշխատողի գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործում՝ սոցիալական աշխատանքի փոփոխվող պրակտիկային համընթաց:

Շարունակական մասնագիտական զարգացման ***նպատակն է*** բարելավել այցելուներին մատուցվող սոցիալական ծառայությունների որակը և աջակցել ծառայություններ մատուցողներին լավագույնս իրականացնել սեփական գործառույթները:

Մասնագիտական շարունակական զարգացման բաղադրիչներն են.

- Ակադեմիական կրթություն,
- Մասնագիտական վերապատրաստումներ,
- Մասնակցություն սեմինարներին/կոնֆերանսներին և մասնագիտական հմտությունների զարգացմանը նպաստող այլ միջոցառումներին,
- Սոցիալական աշխատանքի մասնագիտական կրթություն ստացող ուսանողների ուղղորդում համապատասխան պրակտիկայի վայրերում,
- Գիտական աշխատությունների հեղինակում և հրապարակում,
- Մասնակցություն գիտահետազոտական աշխատանքներին,
- Մասնակցություն մասնագիտական սուպերվիզիայի,
- Անդամակցություն մասնագիտական ասոցիացիաներին:

Բաժին 2

Սոցիալական աշխատանքի ծառայությունների/կազմակերպությունների ղեկավարներին/գործատուներին ներկայացվող չափորոշիչները՝

- Աջակցել մարդու իրավունքների և սոցիալական արդարության արժեքների պահպանմանը տվյալ ծառայությունում/կազմակերպությունում:
- Երաշխավորել սոցիալական աշխատողի գործառույթներ իրականացնող աշխատատողների սոցիալական աշխատանքի մասնագիտական որակավորման առկայությունը:
- Ապահովել, որ սոցիալական աշխատողները գործունեություն ծավալեն օրենսդրությանը և մասնագիտական կոդեքսներին համապատասխան: Կազմակերպության քաղաքականությունը պետք է հնարավորություն ընձեռի սոցիալական աշխատողներին՝ գործելու ընդունված ստանդարտներին և ուղենիշերին, ինչպես նաև ազգային օրենսդրությանը համապատասխան:
- Ստեղծել համապատասխան աշխատանքային պայմաններ՝ ապահովելու աշխատակիցների անվտանգությունը և մատուցվող ծառայությունների որակը:
- Մշակել հստակ ռազմավարություն և ընթացակարգեր՝ ուղղված մասնագիտական ռիսկերի նվազեցմանը (մասնագիտական այրում, սթրես և այլն):
- Պարբերաբար վերանայել ծառայության կառավարման ռազմավարությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով մասնագետի կողմից գաղտնիության սկզբունքի պահպանման, հավասար հնարավորությունների ստեղծման, մասնագիտական ռիսկերի և այլնի վրա:
- Սահմանել աշխատողների համար իրատեսական աշխատանքային ծանրաբեռնվածություն:

Աշխատանքային մեծ ծանրաբեռնվածությունը կարող է հանգեցնել ցածրորակ ծառայությունների մատուցմանը, սոցիալական աշխատողի մոտ սթրեսի և մասնագիտական այրման առաջացմանը: Այս ամենից խուսափելու համար անհրաժեշտ է արդյունավետորեն և թափանցիկորեն կառավարել աշխատանքային ծանրաբեռնվածությունները, ինչը պետք է իրականացվի՝ ըստ որոշակի չափանիշների: Սա նշանակում է, որ գործակալությունները պետք է մշակեն աշխատանքային ծանրաբեռնվածությունների կառավարմանը վերաբերող չափորոշիչներ:

- Սոցիալական դեպքերի և աշխատանքային ծանրաբեռնվածությունների կառավարման գործիքներ ստեղծելիս՝ պետք է հաշվի առնել հետևյալ սկզբունքները՝
- յուրաքանչյուր սոցիալական աշխատողի կարողությունները կախված են վերջինիս գիտելիքներից, փորձից, հմտություններից, անձնային առանձնահատկություններից:
- Անձնական գործոնները ժամանակ առ ժամանակ կարող են ազդել սոցիալական աշխատողի կողմից իրականացվող միջամտության որակի վրա:

- Սոցիալական դեպքերի հավասարակշռում դեռևս չի ենթադրում միայն սոցիալական դեպքերի թիվը: Այն նաև ենթադրում է արդյունավետ մոնիթորինգի, գնահատման, սուպերվիզիայի և հաշվետվողականության իրականացմանն աջակցելը:

Ներքոնշյալ ցուցիչները կարող են կիրառվել աշխատանքային և սոցիալական դեպքերի ծանրաբեռնվածությունները չափելու համար՝

- աշխատաժամանակի բաշխումը,
- շահառուների թիվը,
- ռիսկը/ռիսկայնությունը,
- ծառայությունների համալիրությունը,
- տեղափոխումը:

Սոցիալական աշխատանքի պրակտիկայում աշխատաժամանակը բաժանվում է 2 մասի: Աշխատաժամանակի 70%-ը տրամադրվում է շահառուի հետ իրականացվող ուղղակի աշխատանքին, որը ներառում է պլանավորումը, որոշումների կայացումը, փաստաթղթերի կազմումը, խորհրդատվությունը, համա·ործակցությունը և այլն: Աշխատաժամանակի 30%-ը տրամադրվում է շահառուի հետ տարվող անուղղակի աշխատանքին, որը ներառում է զարգացումը, պաշտպանությունը, շարունակական կրթությունը, ուսուցումը և այլն:

Այսպիսով, յուրաքանչյուր սոցիալական աշխատողին մեկ ամսվա կտրվածքով բաժին է ընկնում 10-50 շահառու, որոնցից յուրաքանչյուրի հետ իրականացվում է նվազագույնը 4-12 ժամ ուղղակի աշխատանք:

Ընդ որում, մասնագետի դեպքերի ծանրաբեռնվածությունը կախված է դրանց բնույթից, այսպես. սոցիալական աշխատողը մեկ ամսվա ընթացքում կարող է աշխատել՝

- շուրջ 10 շահառուի հետ, եթե նրանցից յուրաքանչյուրի դեպքերը բարդ են, խնդրահարույց և պարունակում են բազմաթիվ համակցված խնդիրներ,
- շուրջ 30 շահառուի հետ, եթե միջին բարդության դեպքեր են և իրենցից ներկայացնում են 2-3 խնդիր,
- շուրջ 50 շահառուի հետ, եթե դեպքն իրենից ներկայացնում է 1 խնդիր, կամ պահանջվում է անուղղակի աշխատանք (ուղղորդում, վարչարարական հարցերի կարգավորում և այլն):

Ըստ դեպքերի ծանրաբեռնվածության, գործատուն պետք է հաշվարկի, թե նրանցից յուրաքանչյուրի հետ տարվող ուղիղ և անուղղակի աշխատանքը որքան ժամանակ կտանի սոցիալական աշխատողից:

Շահառուի հետ աշխատանքի անհրաժեշտություն կարող է առաջանալ նաև ոչ աշխատանքային ժամերին կամ օրերին և դեպք վարողի կողմից շտապ արձագանքման կարիք լինի: Այս պարագայում գործատուն պետք է հատուկ ուշադրության արժանացնի մասնագետին և աշխատանքային նկարագրում ու պայմաններում ներառի արտաժամյա աշխատանքի մասին դրույթներ:

Ռիսկային գործոնները ևս պետք է հաշվի առնել: Դրանցից կարելի է առանձնացնել խոցելիությունը, տեղեկատվության պակասը, էականորեն վնասվելու հավանականությունը, աջակցող ծառայությունների դժվարամատչելիությունը: Համալիրությունը կարող է ներառել երեխաների պաշտպանության ծառայությունները, խնամքի կազմակերպումը և այլն: Տեղափոխման հիմնախնդիրը կարող է ներառել, օրինակ, եղբայրների և քույրերի տեղավորումը տարբեր ընտանիքներում, շփման բարձր մակարդակի ապահովումը և այլն:

- Ստեղծել հնարավորություններ աշխատատողների շարունակական կրթության, մասնագիտական աճի համար:
- Սոցիալական աշխատողներին ապահովել իրենց կատարած աշխատանքի դիմաց արդարացի այնպիսի վարձատրությամբ, որը չի նսեմացնում իրենց արժանապատվությունն ու իրականացրած մասնագիտական գործունեության նշանակալիությունը անձանց և ամբողջ հասարակության համար:
- Սոցիալական աշխատողների համար ստեղծել պայմաններ՝ ստանալու սուպերվիզորական ծառայություններ:

Սուպերվիզիայի չափորոշիչ. Սոցիալական աշխատողներին իրենց պրակտիկայում պետք է հասանելի լինի պարբերական, կայուն և կառուցողական սուպերվիզիան:

Սոցիալական աշխատողները պետք է կարողանան ստանալ սուպերվիզորի ծառայությունները կազմակերպության սահմաններից ներս որակյալ ծառայություններ ապահովելու, մասնագիտական գիտելիքներ և հմտություններ զարգացնելու, սոցիալական աշխատանքի էթիկայի և արժեքների մասին իրազեկվածությունը, աշխատանքից բավարարվածությունը մեծացնելու, ինքնավերլուծությունը հեշտացնելու, ինչպես նաև հուզական սպառումից խուսափելու նպատակով: Սուպերվիզորի հետ հանդիպումները պետք է պարբերական լինեն ոչ միայն փորձառու մասնագետների, այլև նոր ավարտած, փորձառության պակաս ունեցող մասնագետների և նոր աշխատակիցների համար:

Նոր ավարտած մասնագետների և սկսնակ սոցիալական աշխատողների համար՝ շաբաթական 1 անգամից մինչև 2 շաբաթը 1 անգամ պարբերական հանդիպումներ 2 տարվա ընթացքում:

Պրակտիկ դաշտ նոր մտնող փորձառու սոցիալական աշխատողների համար՝ շաբաթական 1 անգամից մինչև ամսական 1 անգամ պարբերական հանդիպումներ 1 տարվա ընթացքում:

Մասնագիտական կոնկրետ ուղղության շրջանակներում փորձառու սոցիալական աշխատողների համար՝ սոցիալական աշխատողին անհրաժեշտ ժամանակահատվածում պարտադիր հանդիպումներ սուպերվիզորի հետ:

Սուպերվիզորի հետ հանդիպումները կարող են իրականացվել մի շարք մեթոդներով, ինչպիսիք են ***անհատական հանդիպումները, դիադիկ (երկու սոցիալական աշխատողների հետ) հանդիպումները, խմբային սուպերվիզիան,*** *ինչպես նաև* ***հեռակա հանդիպումները հաղորդակցման տարբեր միջոցների (հեռախոսազրույցներ, էլեկտրոնային նամակագրություն, վիդեո-կոնֆերանսներ և այլն) կիրառմամբ:*** *Մանրամասն տես՝ Սուպերվիզիայի բաժինը:*

Բաժին 3

Փաստաթղթավորման չափորոշիչները

Սոցիալական աշխատանքի պրակտիկայում արձանագրությունների կազմմանն ու պահպանմանը ներկայացվող չափորոշիչները

Յուրաքանչյուր շահառուի կապակցությամբ կատարված աշխատանքի համառոտ և շարունակական փաստաթղթավորումը սոցիալական աշխատանքի պրակտիկայի կարևոր պայմաններից է: Փաստաթղթավորումը հիմք է ծառայում աշխատանքի պլանավորման և պրակտիկայի արդյունավետության գնահատման համար: Այն հաճախ անհրաժեշտ է աշխատանքի թափանցիկության, թարմացման, հաշվետվողականության խթանման և այլ նպատակների համար, ինչպես նաև այն ծառայում է որպես սոցիալական աշխատողների պաշտպանության միջոց՝ դատական գործընթացների և իրավական խնդիրների առաջացման պարագայում:

- Արձանագրել բոլոր դեպքերը՝ ըստ յուրաքանչյուր շահառուի և ժամանակային կտրվածքի: Գրառումները հարկավոր է կատարել մասնագիտական լեզվով, սակայն՝ հստակ և հասկանալի:
- Գրառումները կարող են կատարվել փաստաթղթային և էլեկտրոնային եղանակներով:
- Գրառումները պետք է պատրաստվեն, ամբողջացվեն, պահպանվեն և տրամադրվեն շահագրգիռ անձանց/կառույցներին միայն օրենքով սահմանված դեպքերում:
- Փաստաթղթերը պետք է արտացոլեն շահառուների կամ նրանց շահերը ներկայացնող անձանց գիտակցական համաձայնությունը՝ դեպքի վարման գործընթացի բոլոր բաղադրիչների վերաբերյալ՝ կարիքների գնահատում, միջամտության պլանավորում, միջամտություն և մոնիթորինգ՝ միջամտության գնահատման նպատակով, դեպքի ավարտ կամ փոխանցում: Շահառուի արտահայտած տեսակետների, պատմած պատմությունների, նպատակների և արդյունքների արձանագրումը թույլ են տալիս շահառուին առավել պատասխանատու լինել, իսկ սոցիալական աշխատողին՝ ավելի վստահ և պաշտպանված:

Դեպքի արձանագրությունը պետք է ունենա հետևյալ բաղադրիչները.

1. Շահառուի անձնագրային տվյալներ
2. Սոցիալական աշխատողի և շահառուի, ընտանիքի, այլ կազմակերպությունների հետ կայացած հանդիպումների նպատակը, ժամկետները և յուրաքանչյուր հանդիպման արձանագրությունը
3. Հոգեսոցիալական գնահատման սկզբնական և ընթացիկ արդյունքները
4. Ծառայությունների տրամադրման ծրագիրը և մոնիթորինգի անցկացման ընթացակարգերը
5. Ծառայության մատուցման արդյունքները
6. Տրամադրված սուպերվիզիայի կամ խորհրդատվության մասին տեղեկատվություն
7. Ուղղորդվածների, փոխանցված դեպքերի մասին արձանագրություններ

8. Յուրաքանչյուր դեպք պետք է համարակալվի և ստորագրվի սոցիալական աշխատողի կողմից:

Արձանագրությունը պետք է ներառի հետևյալ բաղադրիչները.

1. Շահառուի անձնական տվյալները սոցիալական աշխատողի կողմից տիրապետելու և դրանք օգտագործելու մասին շահառուի գրավոր համաձայնություն
2. Գաղտնիության պահպանման՝ շահառուի և սոցիալական աշխատողի իրավունքների և պարտականությունների մասին համաձայնություն
3. Տրամադրված ծառայություններին առնչվող ստացականների և վճարումների հաշվառում
4. Արձանագրության փաստաթղթավորում:

Շահառուի մասին ողջ տեղեկատվության գաղտնիությունը պետք է պահպանվի: Այսպիսի տեղեկատվությունը կարող է հասանելի լինել ընտանիքի անդամներին, ծառայություն մատուցողներին, կազմակերպություններին կամ այլ կողմերին միայն շահառուի գրավոր թույլտվությամբ: Պետք է հստակ նշված լինի, թե որ տեղեկատվությունն է անհրաժեշտ գաղտնի պահել, ումից և որքան ժամանակ:

Սոցիալական աշխատողը պետք է հետևի արձանագրությունների պահպանման պահանջներին՝ համաձայն իր կազմակերպության կանոններին և իրավասության շրջանակներին: Այսպիսի պահանջները կարող են վերաբերել հավաքված տեղեկատվության տեսակին և հավաքման եղանակին, արձանագրության կազմման կարգին, դրանց պահպանման ժամկետին և, անհրաժեշտության դեպքում, փոխանցման ընթացակարգին:

Միևնույն ժամանակ, ծառայության մատուցումը ևս ենթադրում է որոշակի սահմանափակումներ: Օրինակ, սոցիալական աշխատողը կարող է էթիկապես և իրավաբանորեն պարտավորված լինել տեղեկատվությունը հրապարակել այն իրավիճակներում, երբ առկա է բռնության, անտեսման, շահառուի ինքնասպանության և երրորդ կողմին վնաս հասցնելու իրական վտանգ: Ավելին, դատարանի որոշումը կարող է հիմք հանդիսանալ շահառուի մասին յուրահատուկ տեղեկատվության տրամադրման համար:

ՄԱՍ 3

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՈՒՊԵՐՎԻԶԻԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Սուպերվիզիայի էությունը և նպատակները

Մասնագիտական սուպերվիզիան սահմանվում է որպես սոցիալական աշխատող-սուպերվիզիայի ծառայություններից օգտվող մասնագետի և խորհրդատու-սուպերվիզորի միջև փոխհարաբերություն, որի ընթացքում տեղի է ունենում մասնագիտական գիտելիքների, փորձի և էթիկայի վրա հիմնված պրակտիկայի զարգացմանն ուղղված պատասխանատվության և հաշվետվողականության փոխանակում:

Սուպերվիզիան ունի 5 հիմնական նպատակներ, որոնք ապահովում են վերջինիս որակը.

- *Գիտելիքի և հմտությունների զարգացում,*
- *Սոցիալական աշխատողի մանագիտական զարգացում,*
- *Սոցիալական արդարության ապահովում,*
- *Վարչական գործառույթների կամ խնդիրների լուծում,*
- *Աջակցություն և նպաստում մասնագիտական ինքնավերլուծությանը:*

Սուպերվիզիան սոցիալական աշխատողներին հնարավորություն է տալիս ավելի խորը հասկանալ և ընկալել պրակտիկ իրավիճակները և միջամտության եղանակները:

Սուպերվիզիայի հիմնական բաղադրիչներն են.

- *Կազմակերպության աջակցությունը և սանկցիաները*
- *Սուպերվիզորի կողմից իր դիրքի հեղինակության ընկալումը և կիրառումը,*
- *Ֆորմալ (ձևական) կառուցվածք և ձևաչափ ունեցող հանդիպումները,*
- *Պարբերաբար տեղի ունեցող հանդիպումները փոխադարձ հարգանքի մթնոլորտում,*
- *Նպատակին հասնելու հնարավորությունները, ընթացիկ դիտարկման և կառուցողական հետադարձ կապի մեխանիզմները,*
- *Աշխատանքի կատարման ընթացքում սոցիալական աշխատողի ուղղորդումը,*
- *Մասնակիցների կողմից և վերջիններիս գնահատումը:*

Սուպերվիզիայի ընթացքում իրականացվող գործողությունները կրում են երեք հիմնական բնույթ՝ վարչական, կրթական և աջակցող:

Վարչական սուպերվիզիան *վարչական մեթոդների կիրառման գործընթաց է, որը հնարավորություն է տալիս սոցիալական աշխատողին արդյունավետ կատարել աշխատանքը և մատուցել որակյալ ծառայություններ: Վարչական սուպերվիզիան ուղղված է գործակալության քաղաքականությանը կամ կազմակերպության պահանջներին, ինչպես նաև կենտրոնանում է սուպերվիզիայի ծառայություններից օգտվող մասնագետի կողմից*

աշխատանքային գործառույթների իրականացման և աշխատանքային պայմանագրին վերջինիս գործողությունների համապատասխանության գնահատման վրա:

Կրթական սուպերվիզիան *կենտրոնանում է մասնագիտական խնդիրների վրա և վերաբերում է յուրահատուկ դեպքերին: Այն օգնում է սուպերվիներին ավելի լավ հասկանալ սոցիալական աշխատանքի ընթացքը, ինչպես նաև կատարելագործել սեփական գիտելիքներն ու հմտությունները:*

Աջակցային սուպերվիզիան *նվազեցնում է աշխատանքային սթրեսը, որը ծագում է սուպերվիների մեծ ծանրաբեռնվածության դեպքում: Այն շեշտադրում է աշխատանքային հաջողությունները և նպաստում է աշխատանքային արդյունավետության բարձրացմանը: Աջակցային սուպերվիզիան իրականացվում է պաշտպանության և վստահության մթնոլորտում, որտեղ սուպերվիները կարող են լիարժեք մասնագիտական նույնականացում զգալ:*

Սոցիալական աշխատանքի սուպերվիզորին ներկայացվող պահանջները

1. Սուպերվիզիայի ընդհանուր պահանջները ներառում են հետևյալ որակավորումները.

- ✓ Տվյալ պետության կրթական չափորոշիչներից բարձրագույնին համապատասխանող սոցիալական աշխատանքի մասնագետի որակավորում,
- ✓ Առնվազն սոցիալական աշխատանքի առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ,
- ✓ Հաղորդակցման, կառավարման և վերապատրաստումների իրականացման հմտություններ,
- ✓ Եթե սուպերվիզորը ընտրվում է գործակալության սոցիալական աշխատողներից, ապա համապատասխան մասնագիտական հեղինակության առկայությունը գործընկերների շրջանում: Եթե սուպերվիզորը հրավիրվում է, ապա անհրաժեշտ է մասնագիտական հեղինակության առկայություն համապատասխան ոլորտում,
- ✓ Սուպերվիզորի մասնագիտացումը և փորձագիտական ոլորտը պետք է համապատասխանեն սուպերվիզիայի ծառայություններից օգտվող մասնագետի մասնագիտացմանը և աշխատանքային ոլորտին,
- ✓ Մասնագիտական արդի տեխնոլոգիաների տիրապետում և համապատասխան վերապատրաստումների առկայություն (վկայական):

Սուպերվիզորները պետք է կոմպետենտ լինեն մասնագիտական տեսությունները կիրառելու և խորհրդատվություններ իրականացնելու հարցերում, ինչը պետք է պարբերաբար զարգացնեն մասնագիտական ամսագրերում լույս տեսնող հետազոտություններին և հոդվածներին ծանոթանալու և շարունակական կրթության միջոցով:

Սոցիալական աշխատանքի սուպերվիզիան իր արմատներն ունի սոցիալական աշխատանք մասնագիտության արժեքներում, էթիկայում և փիլիսոփայության մեջ:

Սոցիալական աշխատանքում ընդհանրացվում են սոցիալական աշխատանքի հետևյալ հիմնական (գլխավոր, անկյունաքարային) արժեքները, որոնք հիմք են հանդիսանում սոցիալական աշխատողի էթիկական կոդեքսի համար.

Արժեք 1. Յուրաքանչյուր անհատի արժանապատվության և արժեքի հարգանք,

Արժեք 2. Զգտում դեպի սոցիալական արդարություն,

Արժեք 3. Ծառայություն մարդկությանը,

Արժեք 4. Մասնագիտական պրակտիկայի ամբողջականություն,

Արժեք 5. Գաղտնապահություն մասնագիտական պրակտիկայում,

Արժեք 6. Սուպերվիզիայի ներգրավում որակյալ մասնագիտական պրակտիկայում

2. Սոցիալական աշխատանքի սուպերվիզորները ճանաչում են իշխանությունն ու հեղինակությունը, որոնք ժառանգել են ի պաշտոնե, և համապատասխանաբար կիրառում են դրանք իրենց աշխատանքում:

Գիտելիքի փոխանցման և զարգացման նպատակով համագործակցությունը հավասարակշռվում է սուպերվիզորի, ի պաշտոնե, պարտականությունների հիման վրա: Այնուամենայնիվ, սուպերվիզորի օգնությանը դիմելը չի նշանակում սուպերվիների գիտելիքների և փորձառության թերագնահատում և/ կամ անտեսում: Ավելին, սոցիալական աշխատանքի սուպերվիզորների կողմից թափանցիկ, քննադատորեն ռեֆլեքսիվ, ինչպես նաև համագործակցային գործընթացները նպաստում են սոցիալական աշխատողների ինքնավստահության բարձրացմանը, քանի որ նմանատիպ հարաբերություններում նրանք տեղեկացված են լինում էթիկական և պրակտիկայում ծագող մի շարք խնդիրների մասին:

Սուպերվիզիայում օբյեկտիվությունը պահպանելու համար կարևոր է՝

- Ունենալ սուպերվիզիայի պայմանագիր փոխադարձ համաձայնությամբ հաստատված նպատակներով, պարտականություններով և ժամկետներով,
- Պարբերաբար հետադարձ կապի մեջ լինել սուպերվիների հետ նրանց նպատակների հետ կապված,
- Համաձայնության գալ որևէ մեթոդի շուրջ, որի միջոցով հնարավոր կլինի լուծել հաղարդակցության և այլ տիպի խնդիրները սուպերվիզիայի սեսիաների (սուպերվիզորի հետ հանդիպումների) ընթացքում,
- Բացահայտել այն զգացմունքները, որոնք սուպերվիները ունեն շահառուների նկատմամբ և որոնք կարող են ազդել վերջիններիս կողմից տրամադրվող մասնագիտական ծառայությունների վրա կամ սահմանափակել դրանք:

3. Սոցիալական աշխատանքի սուպերվիզորները պետք է ունենան սուպերվիզիայի մասնագիտական գիտելիքներ և հմտություններ, և զարգացնեն դրանք:

Դրանց թվում են, օրինակ՝

- Սուպերվիզիայի տեսական մոդելների մասին գիտելիքները,
- Սուպերվիզորների կողմից փաստաթղթերի կազմման պահանջների մասին գիտելիքները,
- Սուպերվիների հետ հարաբերություններում նախաձեռնող և նպատակասլաց լինելու կարողությունը,
- Բազմազանության և մշակութորեն կոմպետենտ պրակտիկայի իրականացման կարողությունը,
- Տարբեր անհատականություններ ունեցող և տարբեր իրավիճակներում գտնվող սուպերվիների կարիքների համար անհատականացված մոտեցում դրսևորելու կարողությունը,
- Սուպերվիների սովորելու կարիքի բացահայտման կարողությունը,
- Աշխատողի զարգացման փուլերի մասին գիտելիքը, և այլն:

4. Սուպերվիզիայի հաճախականությունը և պայմանները տես՝ "Գործատուներին առաջադրվող չափորոշիչները" բաժինը

5. Սոցիալական աշխատանքի սուպերվիզորները սոցիալական աշխատողների հետ կիսում են պատասխանատվությունը շահառուներին տրամադրվող ծառայությունների համար:

Ռիսկերի կառավարման նպատակով սուպերվիզորը պետք է կարողանա.

- Երաշխավորել, որ սուպերվիզիայի ծառայություններից օգտվող մասնագետի կողմից տրամադրվող ծառայությունները համապատասխանում են պրակտիկայի չափորոշիչներին,
- Պահպանել սուպերվիզիայի ընթացքում պատրաստված բոլոր հնարավոր փաստաթղթերը,
- Մոնիթորինգի ենթարկել սուպերվիների յուրաքանչյուր մասնագիտական գործողություն, բացահայտել այն բոլոր գործողությունները, որոնք կարող են վտանգ պարունակել շահառուի կյանքի, առողջության, բարեկեցության համար
- Բացահայտել և չեզոքացնել այն պայմանները, որոնք կարող են ազդել սուպերվիների պրակտիկայի արդյունավետության վրա՝ հմտությունների, դատողությունների և պաշտպանվածության առումներով:
- Սուպերվիզորները պետք է երաշխավորեն, որ շահառուի մասին տեղեկատվությունը գաղտնի է, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց հրապարակումը պարտադրվում է օրենքով: Սուպերվիները աշխատանքի ընթացքում պետք է տեղեկացնեն իրենց շահառուներին, որ նրանց մասին տեղեկատվությունը քննարկվելու է սուպերվիզորի հետ հանդիպումների ժամանակ:
- Սուպերվիզորներն, իրենց հերթին, պարտավորվում են գաղտնի պահել սուպերվիզիայի ընթացքում ստացված տեղեկատվությունը և հրապարակել այն միայն օրենքով կամ այլ իրավական ակտերով պարտադիր դեպքերում և կարգապահական

նկատառումներով: Գաղտնապահության պահպանման մասին կետը անպայման պետք է ներառվի պայմանագրում:

- Շահառուներին մասնագիտական ծառայություններ մատուցելու ընթացքում սոցիալական աշխատանքի սուպերվիզորները և սուպերվիները կարող են հանդիպել էթիկական երկընտրանքների: Այդ երկընտրանքներին լուծում տալու համար սուպերվիզորը և սուպերվին պետք է լիարժեք և խորությամբ ծանոթ լինեն մասնագիտական էթիկայի կանոններին, որոնց հիման վրա գործունեություն են ծավալում: Սուպերվիզորը պարտավոր է քննարկել ցանկացած անհամաձայնություն և/կամ շփոթմունք, որն առաջ է եկել էթիկայի պահանջների հիման վրա: Սուպերվիզորը պետք է հստակ կարողանա տարանջատել մասնագիտական էթիկան, հիմնարար արժեքները և անձնային բարոյական համոզմունքները, և օգնել սուպերվիներին ևս տարանջատել դրանք՝ պրակտիկայում որոշումների կայացման գործընթացներում: Սուպերվիզորները աշխատանքային սեսիաները կարող են օգտագործել որպես ուսուցում՝ նվիրված էթիկական երկընտրանքներին, դրանց վերլուծությանը և որոշումների կայացմանը:
- Սոցիալական աշխատանքի սուպերվիզորը մի շարք իրավիճակներում պետք է կարողանա որոշում կայացնել այլընտրանքային պրակտիկաների, ոչ ավանդական մասնագիտական միջամտությունների կիրառման վերաբերյալ: Եթե սուպերվին իր մասնագիտական աշխատանքում կիրառում է այլընտրանքային պրակտիկա, ապա սուպերվիզորը պետք է վստահ լինի, որ վերջինս լիարժեք տիրապետում է այդ պրակտիկայի հմտություններին, և ինքն էլ փորձառություն ունի դրանում: Եթե սուպերվիզորը չունի այլընտրանքային պրակտիկայի փորձառություն և հմտություններ, ապա աշխատանքում պետք է ներգրավվի այլ սուպերվիզոր: Այդպիսի դեպքերում երկու սուպերվիզորները պետք է համատեղ գործունեություն ծավալեն կոնֆլիկտներից խուսափելու և այլընտրանքային պրակտիկայի արդյունավետ կիրառման նպատակով:

6. Սուպերվիզիայի արդյունքների գնահատման և ավարտի չափորոշիչները սահմանվում են գրավոր ուղեցույցի միջոցով՝ ներառելով այն սուպերվիզիայի վերաբերյալ պայմանագրում՝ որպես հավելված:

ՄԱՍ 4

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԷԹԻԿԱԿԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Սոցիալական աշխատանքի էթիկական չափորոշիչները հիմնվում են մարդու իրավունքների համընդհանուր հայեցակարգի վրա, ըստ որի մարդը բարձրագույն արժեք է և նրա նկատմամբ մասնագիտական մոտեցումները պետք է ունենան առավելագույնս անհատական բնույթ:

Սոցիալական աշխատանքը հիմնվում է արժեքային 3 կարևորագույն հիմնադրույթների վրա.

1.**Մարդը մեծագույն արժեք է**, հետևաբար՝ միշտ պետք է հարգալից վերաբերել նրան:

2.**Անհատը բացառիկ է**. նա իրականացնում և զարգացնում է իր բացառիկությունն այլ անհատների հետ փոխազդեցության ընթացքում:

3.**Անհատն** ի սկզբանե **փոփոխվելու** և **կատարելագործվելու ունակություն ունի**, **ազատ է և ունի ընտրության իրավունք**:

Համաձայն սոցիալական աշխատանքի մասնագիտական էթիկայի ընդհանուր չափանիշների, սոցիալական աշխատանքի մասնագետը պարտավոր է առաջնորդվել էթիկայի հետևյալ չափանիշներով՝

1. *զերծ մնալ վարքագծի անմարդկային դրսևորումներից,*
2. *պաշտպանել շահառուների շահերին ու հարգել նրանց իրավունքները,*
3. *յուրաքանչյուր շահառուի վերաբերել իբրև անհատականության և չնսեմացնել նրա արժանապատվությունը,*
4. *հարգել շահառուների անհատական կարծիքը, ցանկությունները և սահմանված կարգով կամ հնարավորության դեպքում բավարարել դրանք,*
5. *հարգել շահառուների սեփական կյանքն ինքնուրույնաբար տնօրինելու և տրամադրվող ծառայություններից ընտրություն կատարելու իրավունքը,*
6. *ապահովել հավասար հնարավորություններ շահառուների համար,*
7. *ցուցաբերել հանդուրժողականություն շահառուների սովորույթների, սովորությունների, համոզմունքների, կենցաղի, նպատակների, նախասիրությունների և արժեքների բազմազանության հանդեպ,*
8. *նպաստել շահառուների ինքնօգնության կարողությունների զարգացմանը,*

9. *զերծ մնալ ինքն իրեն և շահառուներին անիմաստ, անհարկի և չարդարացված ռիսկի ենթարկելուց,*

10. *խուսափել անհարկի խոստումներից, գիտակցել իր խոսքի արժեքը և տրված խոստման հնարավոր բացասական հետևանքները,*

11. *դրսևորել անաչառություն, այն է՝ չչարաշահել շահառուի վստահությունը,*

12. *չստորադասել շահառուների կարիքները կամ շահերը, ելնելով սեփական կարիքներից կամ շահերից,*

13. *նպաստել շահառուների անձնական բարեկեցությանը, ինքնուրույնությանը և սեփական հնարավորությունների առավելագույն զարգացմանը,*

14. *շահառուների մոտ ձևավորել այլ անձանց իրավունքների և ազատությունների նկատմամբ հարգալից վերաբերմունք,*

15. *հետևել տեղեկատվության գաղտնիության պահպանման և փոխադարձ վստահության սկզբունքներին:*

Այսպիսով, ստորև ներկայացվում են սոցիալական աշխատանքի էթիկական չափորոշիչները, որոնք հիմնվում են սոցիալական աշխատանքի էթիկական կոդեքսի և մասնագիտական արժեքների վրա:

1. Մարդու իրավունքները և սոցիալական աշխատանքը

Սոցիալական աշխատողները պարտավոր են գործել մարդու իրավունքների շրջանակներում: Բոլոր այն գործողությունները, որոնք հակասում են «Մարդու իրավունքների» համընդհանուր հռչակագրով սահմանված գաղափարներին, անթույլատրելի են և կարող են ունենալ ոչ ցանկալի և ծանր հետևանքներ թե՛ շահառուի, թե՛ սոցիալական աշխատողի, թե ծառայություն մատուցող կազմակերպության համար: Սոցիալական աշխատանքի մասնագիտական ծառայություններն ուղղված են յուրաքանչյուր շահագրգիռ անձի՝ անկախ նրա ծագումից, մաշկի գույնից, սեռից, տարիքից, ընտանեկան դրությունից, կրոնից, ազգային և/կամ էթնիկ պատկանելիությունից, քաղաքական համոզմունքներից, սեռական կողմնորոշումից, ֆիզիկական կամ հոգեկան սահմանափակումներից:

2. Շահառուի հետ հարաբերությունները

Սոցիալական աշխատողը պետք է շահառուին տեղեկատվություն տրամադրի՝ նրա կարիքներին համապատասխան: Մասնագիտական միջամտության ընթացքում սոցիալական աշխատողը հաշվի է նստում իր գործընկերների կարծիքների հետ (եթե վերջիններս նույնպես առնչություն ունեն տվյալ դեպքի հետ): Բացի այդ, սոցիալական աշխատողը պետք է ապահովի շահառուի դիրքորոշման արտահայտումը, խուսափի շահառուի արժանապատվությունը նվաստացնելուց: Սոցիալական աշխատողները պետք է էմպաթիա/ապրումակցում և հոգատարություն դրսևորեն շահառուներին՝ ծառայություններ մատուցելիս:

Շահառուի հետ հարաբերություններում սոցիալական աշխատողը՝

- պետք է խուսափի շահառուներին վնաս պատճառող հարաբերություններից և կապերից,
- պետք է կանխարգելի և չմասնակցի ազգային, տարիքային, ֆիզիկական և կարգավիճակային խտրականության այլ տիպի դրսևորումներին, այլ իրեն հասանելի միջոցների օգնությամբ պայքարի խտրականության տարբեր դրսևորումների դեմ,
- չպետք է սեփական հետաքրքրություններից ելնելով չարաշահի շահառուների հետ հարաբերությունները:

Սոցիալական աշխատողները կենտրոնանում են շահառուի նպատակների վրա: Նրանք հարգում և աջակցում են նրանց ինքնորոշման իրավունքը և հնարավորինս աջակցում են շահառուի կողմից այն կիրառելու գործընթացում: Նրանց օգնությունը հիմնվում է շահառուի ռեսուրսների վրա: Որպես կանոն, այն ավարտվում է՝

- երբ շահառուն կարող է ինքն իրեն բավականաչափ օգնել,
- երբ մասնագիտական օգնությունը այլևս անհրաժեշտ չէ,
- երբ դա շահառուի ցանկությունն է և/կամ նախատեսվում է օրենքով:

Երբ օգնությունը պետք է սահմանափակվի կամ ավարտվի ռեսուրսների պակասի պատճառով, սոցիալական աշխատողները դիմում են այլընտրանքային միջոցների: Շահառուի հետ հարաբերությունները ոչ մի պարագայում չեն կարող օգտագործվել քաղաքական, սեռական, կրոնական, սոցիալական կամ տնտեսական բնույթի անձնական նպատակով:

3. Գաղտնիության (կոնֆիդենցիալություն, խորհրդապահություն) պահպանման սկզբունքը

Ծառայությունների տրամադրման ընթացքում սոցիալական աշխատողներին հայտնի դարձած բոլոր փաստերի վերաբերյալ կիրառվում է գաղտնիության պահպանման հիմնարար սկզբունքը: Տեղեկատվության փոխանակումը մասնավոր կամ պաշտոնական կառույցների կամ օգնության մեջ ներգրավված առանձին անձանց հետ թույլատրվում է միայն շահառուի համաձայնությամբ, այն դեպքերում, երբ դա օգնության պահանջ է (շահառուն օգնություն հայցելու միջոցով անուղղակի համաձայնվում է տեղեկատվություն փոխանակել) կամ դա նախատեսվում է օրենքով սահմանված կարգով: Սոցիալական աշխատողները պետք է հնարավորինս խուսափեն դատարանում որպես վկա հանդես գալու պարտականությունից, քանի դեռ դրա միջոցով օգնության ընթացքի մեջ ներգրավված մասնակիցներին կամ երրորդ կողմի շահերին զգալի վնաս չի սպառնում: Ամեն դեպքում, շահառուները պետք է տեղեկացվեն իրենց վերաբերող տեղեկատվության փոխանցման մասին:

Սոցիալական աշխատողը պետք է շահառուին տեղյակ պահի տվյալ իրավիճակի գաղտնիության սահմանների մասին, ինչպես նաև տեղեկացնի այն նպատակների մասին, որոնց հասնելու համար տվյալ տեղեկատվությունը օգտագործվելու է: Սոցիալական աշխատողները տեղեկացնում են իրենց շահառուներին տրամադրվելիք օգնության մեթոդների, ծավալի, հնարավորությունների և հետևանքների, ինչպես նաև կանխատեսելի և

ոչ ցանկալի հետևանքների մասին: Խորհրդատվության ընթացքում սոցիալական աշխատողները փորձում են շահառուների համար ապահովել առավելագույն **թափանցիկություն**:

4. Սոցիալական աշխատանքը և շահառուի վերաբերյալ որոշումների կայացումը

Սոցիալական աշխատողները դեպքին վերաբերող որոշումները կայացնում են ստացված ողջ տեղեկատվությունը համադրելով և վերլուծելով, ինչպես նաև առաջնորդվելով մասնագիտական կանոններով և շահառուի իրավունքներով: Շահառուները տեղեկացվում են, որ իրենց վերաբերյալ կայացված ցանկացած որոշում կարող է բողոքարկվել ղեկավար անձանց և սուպերվիզորի մոտ:

5. Էթիկական պատասխանատվությունը գործընկերների հանդեպ

Սոցիալական աշխատողն իր գործընկերներին պետք է վերաբերի հարգանքով, արդարացիությամբ, վստահությամբ՝ հիմնվելով նրբանկատության և արդարության սկզբունքների վրա: Մասնագիտական փոխհարաբերություններում նա պետք է հարգի գործընկերների շրջանում ձեռք բերված վստահությունը և խուսափի այն չարաշահելուց:

Սոցիալական աշխատողը՝

- անհրաժեշտության դեպքում պետք է իր գործընկերներին տրամադրի մասնագիտական աջակցություն,
- անձնական շահերի և հետաքրքրությունների համար պետք է կոնֆլիկտ չառաջացնի գործընկերոջ և ղեկավարության միջև,
- պետք է հարգի գործընկերոջ կողմից շահառուների վերաբերյալ տրամադրված տեղեկատվության գաղտնիությունը:

Գործընկերների հետ հարաբերությունների և նրանց նկատմամբ էթիկական պատասխանատվության չափորոշիչի համատեքստում սոցիալական աշխատողը շահառուին ուղղորդում է այլ սոցիալական աշխատողի մոտ, եթե վերջինիս նեղ մասնագիտացումը համապատասխանում է շահառուների սոցիալական հիմնախնդրի լուծմանը: Սոցիալական աշխատողները միջմասնագիտական համագործակցություն են ծավալում բոլոր այլ մասնագետների, անձանց և կառույցների հետ, որոնք կարող են նպաստել շահառուների կյանքի պայմանների բարելավմանը:

6. Էթիկական պատասխանատվությունը սոցիալական աշխատանքի ծառայություններ մատուցող կազմակերպության հանդեպ

Սոցիալական աշխատողը պարտավոր է ղեկավարության կողմից տրված ռեսուրսները բաշխել օպտիմալ կերպով և պրակտիկայում առաջացած սխալների մասին տեղեկացնել ղեկավարությանը: Այս չափորոշիչը նաև ապահովում է սոցիալական աշխատողի անհատական կամ խմբային հանդիպումները սոցիալական աշխատանքի ներքին կամ արտաքին սուպերվիզորի հետ դրա տարատեսակ դրսևորումներում:

7. Էթիկական պատասխանատվությունը մասնագիտության նկատմամբ

Սոցիալական աշխատողը պետք է պաշտպանի իր մասնագիտության վարկը/հեղինակությունը, պետք է լինի պատասխանատու, ակտիվ և պատրաստակամ մասնագիտության կատարելագործման հարցերում: Նա պետք է գործողություններ նախաձեռնի այն դեպքում, երբ իր գործընկերը խախտում է էթիկական նորմերը՝ հիմնվելով շահառուներին չվնասելու և նրանց կյանքը, առողջությունը և բարեկեցությունը վտանգի չենթարկելու սկզբունքի վրա: Սոցիալական աշխատողը իր կողմից իրականացվող որակյալ մասնագիտական գործունեությամբ կանխարգելում է սոցիալական աշխատանքի անորակ, անարդյունավետ պրակտիկան: Սոցիալական աշխատողները պետք է պարբերաբար հետևեն մասնագիտական դաշտում սոցիալական աշխատանքի գիտության զարգացումներին:

8. Սոցիալական աշխատանքի պրակտիկան և հասարակությունը

Սոցիալական աշխատողն իր գործունեությամբ պետք է նպաստի հասարակության բարեկեցության ապահովմանը և վերջինիս զարգացմանը: Սոցիալական աշխատանքի մասնագետները պետք է ակտիվ մասնակցություն ունենան սոցիալական քաղաքականության մշակմանը և սոցիալական ինստիտուտների կայացմանն ու գործառմանը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, դրանց կատարելագործմանն ուղղված միջմասնագիտական քննարկումներին և որոշումների կայացմանը:

9. Փաստաթղթավորումը և մասնագետի էթիկական պատասխանատվությունը

Սոցիալական աշխատողները պետք է առավելագույնս ուշադիր լինեն շահառուների մասնավոր կյանքին վերաբերող տեղեկատվության նկատմամբ: Նրանք հավաքագրում և փաստաթղթավորում են միայն այն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է օգնություն տրամադրելու համար: Սոցիալական աշխատողները պարտավոր են համապատասխան փաստաթղթերում գրանցել և գնահատել իրենց յուրաքանչյուր քայլը՝ հետևելով տեղեկատվության անվտանգության պահպանման կանոններին: Շահառուներն իրավունք ունեն ծանոթանալ իրենց գործին վերաբերող փաստաթղթավորված տեղեկատվության հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ ծառայության կանոնակարգերով կամ օրենքներով այլ բան է նախատեսված կամ դա վնասում է երրորդ անձի շահերին և իրավունքներին:

Այս չափորոշչի շրջանակներում սոցիալական աշխատողը՝

- պարտավոր է ապահովել շահառուների տվյալների գրավոր և էլեկտրոնային արձանագրությունների գաղտնիությունը,
- մինչև ձայնագրություններ անելը կամ երրորդ կողմի ներգրավվելը, պետք է անպայման ստանա շահառուի համաձայնությունը: Ընդհանրապես, ձայնագրությունները և տեսագրությունները տեղին են միայն ծայրահեղ դեպքերում՝ շահառուի գիտակցված համաձայնության դեպքում:

10. Սուպերվիզիան և շարունակական կրթությունը

Սոցիալական աշխատանքի դերը, բովանդակությունը, ինչպես նաև լիազորությունների շրջանակը ավելի հստակ սահմանելու և «չափելի» դարձնելու համար, գնալով ավելի հրատապ և արդիական է դառնում մասնագետների, ինչպես նաև սոցիալական աշխատանք մասնագիտության ուսանողների մոտ սեփական անձը ճանաչելու կարողության զարգացումը՝ բարձրացնելու նրանց գիտակցությունը, որպես քաղաքացի, սոցիալական աշխատանքի յուրահատուկ պրակտիկ ոլորտի ապագա ներկայացուցիչ:

Սոցիալական աշխատողների համար որակյալ ծառայության տրամադրման ապահովումը պարտադիր պայման է: Որակյալ և արդյունավետ աշխատանքը ապահովում է նաև մասնագետների հավասարակշռության պահպանումը: Մասնագիտական պրակտիկայի պարտադիր պայմաններից են մասնագետների ռեֆլեքսիան, ներքին աշխարհի մեջ **ներթափանցումը /ինտրավիզիա/, սուպերվիզիան և շարունակական կրթությունը:** Սոցիալական աշխատողները պետք է կատարելագործեն իրենց մասնագիտական գիտելիքները և հմտությունները, ինչպես նաև ունակ լինեն խթանել սակավ մասնագիտական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

11. Մասնագիտական էթիկան և վեճերի հարթումը

Սոցիալական աշխատողները պետք է գործընկերների և գործատուների հետ մասնակցեն և նպաստեն էթիկական երկընտրանքների, վեճերի լուծմանը և էթիկապես հիմնավորված որոշումներ կայացնելու պատասխանատվություն կրեն: Որոշ դեպքերում ծագող վեճերի հարթումը իրականացվում է մասնագիտական պայմանագրի /աշխատանքային պայմանագրով նախատեսված մասնագիտական պարտականությունների/ կետերի համաձայն: Պայմանագրի բացակայության դեպքում կոնֆլիկտները և վեճերը հարթվում են կազմակերպության կանոնադրության կետերի /և ներքին կարգապահական կանոնների դրույթների/ համաձայն և/կամ օրենքով սահմանված կարգով (տե՛ս նաև սոցիալական աշխատանքի սուպերվիզիայի չափորոշիչների 2.6.կետը):

12. Սոցիալական աշխատանքի պրակտիկան և պետական քաղաքականությունը

Սոցիալական աշխատողների համար պարտադիր պայման է օրենքների, կանոնակարգերի և սոցիալական քաղաքականության իմացությունը: Սոցիալական աշխատողը պարտավոր է օգտագործել շահառուի իրավունքների գերակայությունը ռեսուրսների սակավության պայմաններում, հատկապես, երբ սոցիալական աշխատողը կրում է մասնակի կամ լրիվ պատասխանատվություն ռեսուրսների բաշխման նկատմամբ: Չնայած կազմակերպության և համայնքի ռեսուրսների պակասը կարող է սահմանափակել շահառուի հիմնախնդրի լուծումների ընտրության հնարավորությունները, սոցիալական աշխատողները պետք է տեղեկացնեն շահառուին առկա հնարավոր բոլոր տարբերակների մասին: Այսպիսով, շահառուն կարող է որոշել, թե հատկապես որ ծառայությունը կարող է լավագույն կերպով համապատասխանել իր կարիքներին:

Սոցիալական աշխատողների դերային բաշխվածությունը նպաստում է պետության ազգային սոցիալական քաղաքականության իրականացմանը: Մի շարք դերեր նաև կարող են

նպաստել համայնքային կառավարման, առողջապահական ծառայությունների, արդարադատության համակրգի գործառման արդյունավետության բարձրացմանը: Մարդկանց սոցիալական, տնտեսական իրավունքների պաշտպանության նպատակով, պետական կառավարման մարմինները կամ կազմակերպությունները, որտեղ աշխատում են սոցիալական աշխատողները, պարտավոր են համապատասխան ռեսուրսներ ապահովել, որոնք բավարար են պրակտիկայի արդյունավետ չափորոշիչների պահպանման համար:

13. Հումանիզմ և կայունության հեռանկարներ

- ✓ **Ժողովրդավարական հեռանկարներ** - փնտրել զարգացման տնտեսական, սոցիալական, մշակութային համապատասխան պայմաններ, որոնք կխթանեն շահառուների մասնակցությունը հասարակության սոցիալական և քաղաքացիական մակարդակներում,
- ✓ **Քաղաքական և տնտեսական հեռանկարներ** - ապահովել օժանդակության սկզբունքը, հավասար հնարավորությունները և քաղաքական, սոցիալական, մշակութային իրավունքների իրացումը,
- ✓ **Կրթական հեռանկարներ** - ունենալ անհրաժեշտ գիտական բազա, մասնագիտական և հետազոտական հմտություններ, որոնք սոցիալական աշխատանք մասնագիտության ուսանողը կարող է ձեռք բերել ակադեմիական կրթության շնորհիվ, իսկ պրակտիկ մասնագետը պետք է ձեռք բերի մասնագիտական փորձի և շարունակական կրթության միջոցով:

14. Հաշվետվողականություն և կազմակերպական համատեքստ

Բոլոր սոցիալական աշխատողները և շահառուները պետք է հնարավորություն ունենան մասնագիտական չափորոշիչների ապահովման հայցով դիմել համապատասխան, իրավաբանորեն լիազորված մարմնին: Սոցիալական աշխատանքը պրակտիկորեն կիրառվում է տարբեր բնագավառներում, որոնցից են՝ մասնավոր, պետական, առևտրային ոլորտները, շահույթ չհետապնդող կազմակերպությունները (բարեգործական հիմնադրամներ, հասարակական կազմակերպություններ) և այլն:

ՄԱՍ 5

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Այսօր հասարակական կարծիք ձևավորող կարևորագույն սուբյեկտ են հանդիսանում զանգվածային լրատվության միջոցները: ԶԼՄ-ների կողմից տրամադրած տեղեկությունները կարող են ձևավորել կամ փոխել հասարակության վերաբերմունքը սոցիալական հիմնախնդիրների նկատմամբ և նպաստել նոր սոցիալական արժեքների ձևավորմանն ու տարածմանը:

Սոցիալական աշխատանքի համատեքստում զանգվածային լրատվության միջոցները կարող են՝

- Հասարակության տարբեր խմբերին և վերջինիս ազդեցիկ հատվածին՝ որոշումներ ընդունողներին և կարծիքների առաջատարներին, տրամադրել տեղեկատվություն աջակցող սոցիալական ծրագրերի անհրաժեշտության վերաբերյալ,
- Հիմնավոր և ամբողջական տվյալներ հաղորդել սոցիալական պաշտպանության կոնկրետ ծրագրերի, դրանց պահանջմունքների ու խնդիրների վերաբերյալ:
- Ներկայացնել և մեկնաբանել սոցիալական աշխատողների հիմնական գործառույթները, մասնագիտական գործունեության առանձնահատկությունները և նպատակները,
- Հասարակությանը տրամադրել տեղեկություններ սոցիալական ապահովության անձնական, ընտանեկան և հասարակական ճգնաժամերը կանխող ծրագրերին ուղղված ծախսերի անհրաժեշտության, նպատակահարմարության և հիմնավոր լինելու վերաբերյալ,
- Տեղեկություններ հաղորդել երեխաների, դեռահասների, ծնողների, տարեցների և բնակչության այլ խմբերի սոցիալական և հոգեկան զարգացման և նրանց աջակցելու միջոցների վերաբերյալ,
- Տրամադրել և ապահովել օգտակար տեղեկատվություն կարիքի մեջ գտնվող քաղաքացիներին՝ գործազուրկներին, միայնակ ծնողներին, մտերիմի կորուստը վերապրողներին,
- Տրամադրել և ապահովել անհրաժեշտ տեղեկատվություն բնակչության խոցելի խմբերին՝ տարեցներին, հոգեկան և ֆիզիկական առողջության խնդիրներ ունեցողներին և անապահով քաղաքացիներին,
- Հանրությանը, հասարակական կազմակերպություններին ներկայացնել, բարձրաձայնել և մեկնաբանել բնակչության խոցելի խմբերի հիմնախնդիրներն ու պահանջմունքները,

- Տրամադրել այնպիսի տեղեկատվություն, որը կարող է օգնել հարևաններին, հարազատներին և այլ աջակցողներին՝ կառուցողական և արդյունավետ կերպով արձագանքել որոշակի հիմնախնդիրներ ունեցող բարեկամների և ընկերների պահանջմունքներին,
- Ինքնօգնության և փոխօգնության խմբերին տրամադրել անհրաժեշտ և օգտակար տեղեկություններ,
- Խրախուսել և խթանել ինքնա և փոխօգնության խմբերի ձևավորմանը դրանց գոյության և գործունեության վերաբերյալ տեղեկությունների հաղորդմամբ և հասարակական աջակցությանը նպաստելու միջոցով:

1. ԶԼՄ-ներում սոցիալական հիմնախնդիրների լուսաբանման ընդհանուր չափորոշիչները

- Սոցիալական հիմնախնդիրներին վերաբերող տեղեկատվության լուսաբանումն իրականացվում է անշահախնդիր և անվճար հիմունքներով՝ հաշվի առնելով ԶԼՄ-ների կողմից իրենց դերի ու նշանակության գիտակցումը սոցիալական հիմնախնդիրների բարձրաձայնման, հասարակական հնչեղության ապահովման և հանրային իրազեկման տեսանկյունից:
- Լրագրողները հստակ պետք է գիտակցեն իրենց գործունեության հետևանքները, քանի որ նրանք՝ հասարակական կարծիքի ձևավորման և մարդկանց վարքի վրա ազդեցության տեսանկյունից, ունեն կարևոր նշանակություն:
- ԶԼՄ-ներն իրենց վարկանիշի ապահովման, լսարան գրավելու համար՝ բարոյապես, հոգեպես, նյութապես չպետք է վնասեն սոցիալական հիմնախնդիր կրողին:
- ԶԼՄ-ների կողմից սոցիալական հիմնախնդրի լուսաբանման առաջնային նպատակը պետք է լինի բացառապես վերոնշյալ հիմնախնդրի լուծումը:
- Սոցիալական հիմնախնդիրներ լուսաբանելիս ԶԼՄ-ները պետք է հետևեն տարբեր օրենսգրքերով ամրագրված և կարգավորվող վարքի նորմատիվային կանոններին:
- ԶԼՄ-ների կողմից սոցիալական հիմնախնդիրներին անդրադարձը պետք է միտված լինի մարդու իրավունքների պաշտպանությանը, այլ ոչ թե՝ խախտմանը: Սոցիալական հիմնախնդրի շուրջ ցանկացած հրապարակում պետք է լինի մարդու իրավունքների էթիկական նորմերի սահմաններում:

Սոցիալական հիմնախնդիրների լուսաբանման հատուկ չափորոշիչները հիմնվում են մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի վրա (1948 թ. դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ի գլխավոր խորհուրդն ընդունեց և հռչակեց մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը):

1.1 Բոլոր մարդկային էակները ծնվում են ազատ և հավասար իրավունքներով

ԶԼՄ-ները պետք է խուսափեն անհանդուրժողականության, ցանկացած տեսակի խտրականության, այլատյացության դրսևորումներից: Հասարակության յուրաքանչյուր անդամ մեդիա հրապարակումներում պետք է դիտարկվի և ներկայացվի հավասար պայմաններում՝ անկախ սեռից, տարիքից, ռասսայական, ազգային, սոցիալական պատկանելիությունից, սոցիալական կարգավիճակից:

ԶԼՄ-ների յուրաքանչյուր լուսաբանում պետք է լինի հնարավորինս զուսպ, որակումներում չափավոր, խուսափի երկիմաստ արտահայտություններ կիրառելուց, սոցիալական հիմնախնդրի կրողին պիտակավորելուց:

1.2 Կյանքի, ազատության և անձեռմխելիության իրավունք

ԶԼՄ-ները պարտավոր են պաշտպանել սոցիալական հիմնախնդիր կրողի անձնական կյանքի անձեռնմխելիությունը՝ անանունությունը, գաղտնիությունը:

Լրագրողը պետք է չներխուժի սոցիալական հիմնախնդրի կրողի անձնական կյանք՝ առանց վերջինիս համաձայնության և թույլտվության:

1.3 Տանջանքներից կամ խիստ, անմարդկային վերաբերմունքից և պատժից ազատություն

Հրապարակումներում ԶԼՄ-ները պետք է խուսափեն սոցիալական հիմնախնդրի կրողին՝ խղճահարություն առաջացնելու ակնկալիքով, որպես զոհ ներկայացնելուց:

1.4 Մտքի, խղճի և կրոնի ազատություն:

Սոցիալական հիմնախնդրի կրողը լուսաբանումներում պետք է չարժանանա առանձնակի վերաբերմունքի՝ ելնելով իր ընկալումներից, ներկայացրած տեսակետներից, կրոնական պատկանելությունից և այլն:

1.5 Կարծիքների և համոզմունքների արտահայտման ազատություն

Սոցիալական հիմնախնդրի յուրաքանչյուր կրող իրավունք ունի ազատորեն արտահայտելու սեփական համոզմունքներն ու տեսակետը ԶԼՄ-ների լուսաբանումներում:

1.6 Կրթության իրավունք

ԶԼՄ-ներում յուրաքանչյուր հրապարակում պետք է լինի հասանելի և հասկանալի լսարանի համար:

2. ԶԼՄ-ներում երեխաների հիմնախնդիրների լուսաբանման չափորոշիչները[3]

Որպես սոցիալական հիմնախնդիրների կրող կողմի՝ երեխաներին անդրադարձը ԶԼՄ-ների կողմից հրապարկումներում ավելի մեծ ուշադրություն և զգուշություն է պահանջում, քանի որ լուսաբանումների հետևանքների տեսանկյունից երեխաներն առավել զգայուն և խոցելի են: Այդ իսկ պատճառով լրատվամիջոցների հրապարկումների էթիկական չափորոշիչների շարքում առանձնահատուկ տեղ են գրավում երեխաների մասին լրագրողական նյութերի կառուցման նորմերը:

1999 թվականի նոյեմբերին ԶԼՄ-ներին ուղղված նախագծերին մասնակցող երիտասարդները, ԶԼՄ-ները և երեխաների իրավունքների փորձագետները հավաքվեցին Օսլոյում՝ երեխաների իրավունքների պաշտպանության հարցում ԶԼՄ-ների ազդեցության դերն ու նշանակությունը քննարկելու նպատակով: Արդյունքում ձևավորվեց «Օսլոյի մարտահրավերը» (Oslo Challenge): Նախագծի նպատակն էր ԶԼՄ-ների լուսաբանումների մշտադիտարկումների իրականացումը, որպեսզի լրատվամիջոցները խստագույնս հետևեն

[3] Նույն մոտեցումը պետք է որդեգրվի, երբ գործ ունենք անգործունակ ճանաչված անձանց հետ, քանի որ նրանք ինքնուրույն չեն կարող պաշտպանել իրենց իրավունքները:

համընդհանուր նորմատիվ չափորոշիչներին: Փորձագետներն այս փաստաթղթում առանձնացրին 5 բաժին՝

- Երեխայի համար ԶԼՄ-ների, այդ թվում նաև նորագույն լրատվամիջոցների մատչելիության իրավունքը,
- Երեխայի՝ ԶԼՄ-ների ոլորտում կրթության և ընդհանուր մեդիագրագիտության իրավունքը,
- Երեխայի՝ ԶԼՄ-ների աշխատանքներին մասնակցության և ներգրավման իրավունքը,
- Երեխայի՝ ԶԼՄ-ների կողմից պատճառած վնասից պաշտպանության իրավունքը,
- ԶԼՄ-ների դերը երեխաների իրավունքների սատարման և պաշտպանության հարցում:

3. ԶԼՄ-ներում երեխաների հիմնախնդիրների լուսաբանման ընդհանուր սկզբունքները

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը (Unicef) մշակել է երեխաների հիմնախնդիրների լուսաբանման էթիկական սկզբունքներ[4], որոնց պետք է հետևեն լրագրողները՝ երեխաների վերաբերյալ նյութեր պատրաստելիս: Հիմնական սկզբունքները հետևյալներն են՝

1. Յուրաքանչյուր երեխայի իրավունքները և հետաքրքրությունները ավելի վեր են, քան այս կամ այն հիմնախնդրի լուծման հրատապությունը: Ուստի յուրաքանչյուր երեխա պետք է պաշտպանված լինի ցանկացած իրավիճակում:
2. Երեխաները ևս ունեն անձնական կյանքի գաղտնիության և անանունության իրավունք: Երեխաները պետք է պաշտպանված լինեն ինչպես իրական, այնպես էլ պոտենցիալ ցանկացած տեսակի վտանգներից, անհաջողություններից և պատիժներից:
3. Երեխան ունի սեփական կարծիքն արտահայտելու և իր կյանքին վերաբերող որոշումների կայացմանը մասնակցելու իրավունք: Երեխայի իրավունքների պաշտպանվածության մակարդակը և իրականացումը կախված է երեխայի տարիքից և հասունության աստիճանից:
4. Երեխայի կյանքի վրա ԶԼՄ-ներում հրապարակումների հետևանքները գնահատելու գործում կարող են օգնել նրա հարազատները՝ ծնողները, խնամակալները, ինչպես նաև նրա հետ աշխատող մասնագետները՝ բժիշկները, հոգեբանները, սոցիալական աշխատողները և այլն:
5. Եթե երեխայի կամ նրա հարազատների համար կա իրական կամ պոտենցիալ վտանգ, ապա ԶԼՄ-ների հրապարակումներում պետք է ձգտել ոչ միայն նյութի մեջ անանություն պահպանել՝ հիմնախնդիրը կրող երեխայի անունը փոխելու կամ չնշելու տարբերակով, այլև պետք է խուսափել ցանկացած տեսակի լրացուցիչ տեղեկատվության՝ լուսանկարների կամ այլ փաստագրական նյութերի, հրապարկումից, որը կարող է նույնականացվել երեխայի հետ:

[4] СРЕДСТВА МАССОВОЙ ИНФОРМАЦИИ И ПРАВА РЕБЕНКА. Справочник для журналистов, составленный самими журналистами. Разработано MediaWise для ЮНИСЕФ; Второе издание 2005г. при сотрудничестве с Региональным Представительством ЮНИСЕФ По странам Центральной и Восточной Европы и СНГ MediaWise&UNICEF; 2005г.

Երեխաների հիմնախնդիրների լուսաբանումն և երեխաների իրավունքներին վերաբերող հրապարակումները չպետք **հակասեն ՄԱԿ-ի երեխայի իրավունքների Կոնվենցիային** (1989 թ. Նոյեմբերի 20):

Երեխաների հիմնախնդիրները լուսաբանելուց և երեխաների իրավունքներին վերաբերող հրապարակումներում՝ զանգվածային լրատվության միջոցները և լրագրողները պետք է գործեն մասնագիտական կոդեքսի համապատասխան[5]:

2.1 Երեխաներին վերաբերող հիմնախնդիրների հետ առնչվելիս զանգվածային լրատվության միջոցները և լրագրողները պետք է ձգտեն կատարելության՝ ճշգրտության և զգայունակության տեսանկյունից,

2.2 Ծրագրերի և հրապարակումների մեջ ԶԼՄ-ները պետք է թույլ չտան երեխաներին վնաս հասցնող ցանկացած տեսակի տեղեկատվության օգտագործում,

2.3 Զանգվածային լրատվության միջոցները պետք է խուսափեն սենսացիաների համար երեխաների մասնակցությամբ լրագրողական նյութերում կարծրատիպերի կիրառումից,

2.4 Լրատվամիջոցները պետք է հստակ գիտակցեն երեխաներին վերաբերող ցանկացած նյութի հրապարակման հետևանքները և նվազագույնի հասցնեն երեխաների համար հնարավոր վտանգները,

2.5 Պետք է պաշտպանեն երեխաների վիզուալ կամ ցանկացած այլ ձևի ներկայացվածությունը լրատվամիջոցների հաղորդումներում, եթե դա լրջորեն չի հակասում հասարակական շահերին,

2.6 Պետք է հնարավորություն տան երեխաներին իրենց կարծիքն արտահայտել ԶԼՄ-ներով՝ առանց կողմնակի մարդկանց ազդեցության,

2.7 Զանգվածային լրատվության միջոցները և լրագրողները պետք է ապահովեն երեխաների կողմից տրամադրվող տեղեկատվության հավաստիությունը, ստուգեն այն առանց երեխային ռիսկի ենթարկելու,

2.8 Պետք է խուսափեն երեխաների սեքսուալ կերպարների օգտագործումից,

2.9 Լրագրողները երեխաների անհրաժեշտ լուսանկարները պետք է ձեռք բերեն բաց, արդար և ուղղակի մեթոդներով՝ անմիջականորեն երեխայի ծնողի կամ խնամակալի համաձայնությամբ,

2.10 Զանգվածային լրատվության միջոցները և լրագրողները պետք է ստուգեն ցանկացած կազմակերպության իրավասությունները, որը ելույթ է ունենում երեխաների անունից և ներկայացնում նրանց շահերը:

---

[5] Լրագրողների միջազգային ֆեդերացիան (ԼՄՖ) երեխաների իրավունքները ներառել է մասնագիտական էթիկայի կոդեքսի մեջ: ԼՄՖ-ի գլխավոր սկզբունքներն ամրագրված են «Երեխաների իրավունքներն ու ԶԼՄ-ները.երեխաների հետ կապված նյութերի մշակման սկզբունքներ և կանոնների» մեջ, որն ընդունվել է 1998 թվականի մայիսի 2-ին 70 երկրների լրագրողական կազմակերպությունների կողմից:

ՄԱՍ 6

ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ/ՍԱՆԿՑԻԱՆԵՐԸ

<u>Հիմնավորում</u>

Չափորոշիչների առկայությունը ենթադրում է նաև դրանց իրականացումն ապահովող որոշակի մեխանիզմների առկայություն, որոնց դերում այս փաստաթղթի շրջանակներում հանդես են գալիս չափորոշիչների խախտման դեպքում կիրառվող ընթացակարգերը/սանկցիաները: Վերջիններիս հիմնական ***նպատակը***, ոչ միայն չափորոշիչների խախտման դեպքերի ուսումնասիրության, քննարկման և պատասխանատվության ենթարկելու կարգի սահմանումն է, այլև չափորոշիչների խախտման դեպքերի կանխարգելումը:

Այս սանկցիաների հիմքում ընկած է շահառուի, ծառայության և մասնագետի շահերի և իրավունքների պաշտպանության գերակայության սկզբունքը:

1. Յուրաքանչյուր չափորոշչի ցանկացած խախտման (այսուհետ՝ խախտում) հայտնաբերման դեպքում ուսումնասիրվում է դրա առաջացման պատճառը, ինչպես նաև հետևանքները:

2. Նշված ուսումնասիրությունը կատարվում է՝

- խախտումը հայտնաբերող մասնագետի կամ մարմնի կողմից.
- խախտումը կատարած աշխատողի անմիջական ղեկավարի կամ սուպերվիզորի կամ գործատուի ստեղծած հանձնաժողովի կողմից.
- համապատասխան գործատուի վերադասի կամ վերադասի կողմից ձևավորված անկախ հանձնաժողովի կողմից:

3. Խախտման առաջացման պատճառի բնույթով որոշվում են հետագա գործողությունները, մասնավորապես՝

1) իրավակիրառական պրակտիկան և սոցիալական աշխատանքի չափորոշիչները չեն համապատասխանում միմյանց.

Կազմակերպվում են քննարկումներ շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ՝ առաջացած իրավիճակից դուրս գալու հնարավոր ուղիների որոշման նպատակով, որը կարող է ենթադրել վերանայումներ թե՛ չափորոշիչներում, թե՛ ոլորտը կարգավորող իրավական ակտերում:

2) սոցիալական աշխատողը չի տիրապետում չափորոշիչներին.

Այս դեպքում կարիք կա ուսումնասիրել առաջացած իրավիճակի պատճառը՝

ա. սոցիալական աշխատողը չունի համապատասխան մասնագիտական կրթություն.

բ. ունի համապատասխան մասնագիտական կրթություն, սակայն տեղեկացված չէ չափորոշիչներին.

«ա» ենթակետի դեպքում՝ ձեռնարկվում են համապատասխան միջոցներ, բացառելու համար համապատասխան կրթություն չունեցող անձի պրակտիկ գործունեությունը սոցիալական աշխատանքի բնագավառում, միաժամանակ իրազեկում են մասնագիտական կրթություն ստանալու հնարավոր ուղիների մասին:

«բ» ենթակետի դեպքում՝ ձեռնարկվում են միջոցներ չափորոշիչների մասին տեղեկացվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ:

4. Խախտման արդյունքում առաջացած իրավական հետևանքների բնույթով որոշվում են հետագա գործողությունները (սանկցիաները)

1) խախտվել են չափորոշիչները (պրակտիկ աշխատանքում), սակայն շահառուի իրավունքների խախտում չի գրանցվել: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ գործավարական պահանջների խախտում է իրականացվել:

Ա. գործատուն իր հայեցողությամբ աշխատողի նկատմամբ կիրառում է կարգապահական տույժ.

Բ. ձեռնարկում է միջոցներ սոցիալական աշխատողի մասնագիտական (պրակտիկ հմտություններ) կատարելագործման նպատակով.

2) խախտվել են չափորոշիչները (պրակտիկ աշխատանքում) և շահառուի իրավունքները.

ա. վերականգնվում է շահառուի իրավունքը.

բ. ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ խախտումը հանգեցնում է վարչական պատասխանատվության, որի պարագայում համապատասխան մարմնի կողմից աշխատողի նկատմամբ կիրառվում է վարչական տույժ.

գ. ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ խախտումը հանգեցնում է քրեական պատասխանատվության, որի պարագայում գործում են իրավապահ մարմինները:

5. Խախտման հայտնաբերման դեպքում ուսումնասիրվում են խախտում կատարած աշխատողի անմիջական ղեկավարի, սուպերվիզորի և տվյալ գործատուի պատասխանատվության շրջանակը տվյալ խախտման առաջացման մեջ՝

1) աշխատողի անմիջական ղեկավարի, սուպերվիզորի և տվյալ գործատուի պատասխանատվության շրջանակը ճշգրտելուց հետո, համապատասխան հանգամանքների առկայության դեպքում՝ նրանց նկատմամբ կիրառվում են 4-րդ կետով սահմանված միջոցները՝ դրանց համապատասխան հիմքերի առկայության դեպքում:

ՄԱՍ 7

Հավելվածներ

Հավելված 1. **«Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի դասընթացների ընդհանուր մասնագիտական բաղադրիչը**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ	
B1	Սոցիալական աշխատանքի հիմունքներ
B2	Սոց. աշխատանքի սոցիոլոգիական հիմքերը
B3	Սոց. աշխատանքի հոգեբանական հիմքերը
B4	Սոց. աշխատանքի իրավական հիմքերը
B5	Հետազոտության մեթոդները սոց. աշխատանքում
B6	Սոցիալական աշխատանքի պատմություն
B7	Հոգեբանություն
B8	Սոցիալական աշխատանքի էթիկական հիմքերը
B9	Սոցիալական մանկավարժություն
B10	Մարդու իրավունքները և սոց. աշխատանքը
B11	Սոցիալական քաղաքականության հիմունքներ
B12	Սոցիալական վերահսկողություն և շեղվող վարք
B13	Սոցիալական կառավարում
B14	Կոնֆլիկտաբանության տեսություն և պրակտիկա
B15	Սոցիալական դեպքի կառավարում
B16	Սոցիալական աշխատանքի տնտեսագիտություն
B17	Ինստիտուցիոնալ սոցիալական աշխատանք 1 (Ընտանեկան սոցիալական աշխատանք)

B18	Միջոցների հավաքագրում
B19	Սոց. պաշտպանության համակարգը Հայաստանում
B20	Ժողովրդագրություն և սոց.վիճակագրություն
B21	Մարդու կյանքի փուլերը
B22	Սոցիալական խորհրդատվության հիմունքներ
B23	Սոցիալական աշխատանքի մեթոդներ
B24	Սոցիալական աշխատանքի մոդելներ
B25	Սոցիալական աշխատանքի տեխնոլոգիաներ
B26	Սոցիալական աշխատանք խոցելի խմբերի հետ 1 (Երեխաներ, տարեցներ)
B27	Սոցիալական աշխատանք խոցելի խմբերի հետ 2 (Հաշմանդամներ, գործազուրկներ)
B28	Ինստիտուցիոնալ սոցիալական աշխատանք 2 (Կրթության և առողջապահության համակարգեր)
B29	Սոցիալական աշխատանք խոցելի խմբերի հետ 3 (Իրավախախտներ, միգրանտներ)
B30	Ինստիտուցիոնալ սոցիալական աշխատանք 3 (Արդարադատության համակարգ, կրոնի ինստիտուտ)
B33	Սոցիալական աշխատանքի պրակտիկում 1 (Հետազոտության և դեպքի վարման մեթոդաբանություն)
B34	Սոցիալական աշխատանքի պրակտիկում 2 (Երեխաների հետ սոցիալական աշխատանք)
B35	Սոցիալական աշխատանքի պրակտիկում 3 (Համայնքային սոցիալական աշխատանք)
	Կուրսային աշխատանք 1
	Կուրսային աշխատանք 2
	Ավարտական աշխատանք

Հավելված 2. **Քաղվածք «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքից**

Հոդված 8.

Հիմնական սոցիալական ծառայությունները

1. Հիմնական սոցիալական ծառայություններն են՝

1) խորհրդատվական օգնությունը.

2) վերականգնողական օգնությունը.

3) բնաիրային օգնությունը .

4) կացարանով ապահովելը.

5) խնամքը.

6) իրավական օգնությունը.

7) օրենքով սահմանված կենսաթոշակներ, նպաստներ և այլ դրամական վճարներ նշանակելը և վճարելը.

8) օրենքով սահմանված զբաղվածության ծառայությունները և բժշկասոցիալական փորձաքննության բնագավառում ծառայությունները.

9) օրենքով չարգելված այլ սոցիալական ծառայություններ:

Հոդված 38.

Սոցիալական աշխատանքը

1. Սոցիալական աշխատանքը մարդու անհատական սոցիալական կարիքների բավարարման նպատակով հոգեբանական և մանկավարժական մեթոդների ու եղանակների կիրառման միջոցով իրականացվող մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է մարդու (անձամբ այն իրականացնելու անկարողության դեպքում) կյանքի դժվարին իրավիճակը հաղթահարելուն կամ կանխարգելելուն՝ մարդուն, ընտանիքին, սոցիալական այլ խմբերին անհատական օգնություն ցուցաբերելու միջոցով՝ սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով:

2. Սոցիալական աշխատանքի մասնագետներն են սոցիալական աշխատողն ու սոցիալական սպասարկողը:

Հոդված 39.

Սոցիալական աշխատանքի մասնագետը

1. Սոցիալական աշխատողը «Սոցիալական աշխատանքի» բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող և սոցիալական աշխատողի մասնագիտական գործունեություն իրականացնող անձն է:

2. Սոցիալական աշխատող կարող է լինել նաև այլ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունեցող և «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ ուսուցման դասընթացներ ավարտած, համապատասխան վկայական ստացած անձը, որն ունի սոցիալական ոլորտի աշխատանքի առնվազն մեկ տարվա փորձ:

3. Սոցիալական սպասարկողը «Սոցիալական աշխատանքի» միջին կամ նախնական մասնագիտական կրթություն ունեցող և սոցիալական սպասարկողի մասնագիտական գործունեություն իրականացնող անձն է:

4. Սոցիալական սպասարկող կարող է լինել նաև այլ միջին կամ նախնական մասնագիտական կրթություն ունեցող և (կամ) «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ դասընթացներ ավարտած, համապատասխան վկայական ստացած անձը:

Հոդված 40.

Լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի սոցիալական աշխատանքի մասնագետի հիմնական իրավունքներն ու պարտականությունները

1. Լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի սոցիալական աշխատանքի մասնագետները քաղաքացիական կամ համայնքային ծառայողներ են:

2. Լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմինն ունի սոցիալական աշխատող, որը սոցիալական դեպք վարողն է, և սոցիալական սպասարկող:

3. Սոցիալական դեպք վարողը և սոցիալական սպասարկողն իրավունք ունեն՝

1) կատարելու տնային այցելություններ, անհրաժեշտության դեպքում ուսումնասիրելու սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած անձանց (ընտանիքների) սոցիալական և նյութական պայմանները.

2) ներկայացնելու առաջարկություններ սոցիալական աջակցության ծրագրերի ձևավորման և դրանց կատարելագործման վերաբերյալ:

4. Սոցիալական դեպք վարողը՝

1) տիրապետում է սոցիալական աջակցություն հայցողի, ինչպես նաև ստացողի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանն առնչվող Հայաստանի

Հանրապետության օրենսդրությանը, նրա սոցիալական կարիքների գնահատման, այդ կարիքների բավարարմանն ուղղված անհատական ծրագրերի կազմման մեթոդներին ու տեխնիկային, առկա ռեսուրսների և հնարավորությունների մասին տեղեկատվությանը.

2) համագործակցում է աջակցող ցանցի մասնակիցների հետ:

5. Սոցիալական դեպք վարողը պարտավոր է՝

1) պաշտպանել սոցիալական աջակցություն ստացողի իրավունքներն ու օրինական շահերը.

2) ապահովել սոցիալական աջակցություն ստացողի ներգրավվածությունը և ակտիվ մասնակցությունն իր խնդիրների լուծման գործընթացին, որոշումների կայացմանը՝ զարգացնելով սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական հմտությունները և ինքնիրացումը (ինքնորոշումը).

3) գնահատել սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական կարիքները.

4) կազմել սոցիալական աջակցություն ստացողի անհատական ծրագիրը՝ ներգրավելով աջակցող ցանցի մասնակիցների մասնագետներին.

5) օգտագործել տվյալ տարածաշրջանում առկա աջակցող ցանցը՝ սոցիալական անհատական ծրագիր կազմելու և իրականացնելու նպատակով.

6) համակարգել սոցիալական անհատական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը, կազմակերպել խմբային (բազմամասնագիտական) քննարկումներ և ուղղորդել սոցիալական աջակցություն ստացողին տարբեր մասնագիտացված կազմակերպություններ՝ իրենց իրավունքների մասին իրազեկելու, ինչպես նաև դրանք իրականացնելու համար.

7) ստանձնել միջնորդի դեր տարբեր և երբեմն միմյանց հակասող շահեր ունեցող կազմակերպությունների միջև՝ ապահովելով կազմակերպությունների միջև համագործակցությունը և տեղեկատվության փոխանակումը, ինչպես նաև սոցիալական աջակցություն ստացողի օրինական շահերի պաշտպանության առաջնային դերը.

8) կազմակերպությունների և համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետի հետ մշակել կանխարգելող ծրագրեր՝ ուղղված համայնքներում բացահայտված ռիսկային գործոնների նվազեցմանը, սոցիալական իրավունքների կոլեկտիվ պաշտպանության մեխանիզմների ձևավորման խթանմանը և պաշտպանությանը.

9) ապահովել անձանց համար սոցիալական աջակցության տրամադրման հավասար հնարավորություններ.

10) պահանջել սոցիալական աջակցություն հայցող կամ սոցիալական աջակցություն ստացող անձից միայն սոցիալական աջակցության տրամադրման համար անհրաժեշտ տեղեկությունները, աջակցել անհրաժեշտ փաստաթղթերի (տվյալների) ճիշտ ներկայացմանը.

11) աջակցել իր սպասարկման տարածքում բնակվող անձանց (ընտանիքների) սոցիալական աջակցության իրավունքի իրականացմանը և

12) տնային այցելությունների ժամանակ ներկայացնել սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված վկայականը:

6. Սոցիալական սպասարկողը պարտավոր է՝

1) սոցիալական աջակցություն հայցող անձին օգնել հայտնաբերելու և օգտագործելու դժվարություններ հաղթահարելու իր կարողությունը.

2) միջոցներ ձեռնարկել հայտնաբերելու սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց, ընտանիքներին և աջակցել նրանց դիմելու տարածքային մարմնին.

3) տնային այցելությունների ժամանակ ներկայացնել սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված վկայականը:

7. Սոցիալական աշխատանքի մասնագետն ունի սույն օրենքով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ իրավունքներ և կրում է պարտականություններ:

8. Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինները և տարածքային մարմնի սպասարկման տարածքում գործող կազմակերպությունները պարտավոր են աջակցել սոցիալական աշխատանքի մասնագետին իր ծառայողական պարտականությունները կատարելիս:

9. Սոցիալական աշխատանքի մասնագետն ունի վկայական, որը տալիս է լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի վերադասը:

10. Սոցիալական աշխատանքի մասնագետին սոցիալական ծառայությունների տրամադրման ընթացքում հայտնի դարձած անձնական տեղեկությունները համարվում են մասնագիտական գաղտնիք, և այն հրապարակող կամ տարածող սոցիալական աշխատանքի մասնագետը պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերի:

Օգտագործված գրականության ցանկ

1. Եվրոպական սոցիալական խարտիա
2. «Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենք»
3. Սոցիալական աշխատանքի պրակտիկայի եվրոպական ստանդարտները
4. Սոցիալական աշխատանքի կրթության և վերապատրսատման գլոբալ ստանդարտներ/IFSW
5. СРЕДСТВА МАССОВОЙ ИНФОРМАЦИИ И ПРАВА РЕБЕНКА. Справочник для журналистов, составленный самими журналистами. Разработано MediaWise для ЮНИСЕФ; Второе издание 2005г. при сотрудничестве с Региональным Представительством ЮНИСЕФ По странам Центральной и Восточной Европы и СНГ MediaWise&UNICEF; 2005г.